

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԶԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա.Ս.ՎԱՅՐԱՄՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՌՈՅՑՆԵՐՆ ՈՒ ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿՆԵՐԸ ԶԻՆ ԵՎ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
/ուսուլմնամեթոդական ձեռնարկ/

Հեղինակային հրատարակություն

ԵՐԵՎԱՆ-2011

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդը համարվելով աշխարհի ամենահնագույն ժողովուրդներից մեկը իր բազմադարյան գոյության ընթացքում կերտել է հարուստ ու նշանակալից կուլտուրա: Իր ավանդն է ներմուծել ոչ միայն արևելքի ժողովուրդների, այլ նաև համամարդկային կուլտուրայի զարգացման մեջ: Ելնելով վերագրյալից հաստատորեն կարելի է ասել, որ հայ ժողովրդի անցյալի կուլտուրայի մի յուրօրինակ ճյուղ է ֆիզիկական կուլտուրան, որն իր բոլոր կողմերով կապված է եղել ժողովրդի նիստ ու կացի, բարքերի, սովորույթների, ազատագրական պատերազմների և այլ իրողությունների հետ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար վիթխարի նշանակություն ունեն մարզակառույցներն ու խաղահրապարակները, որոնք իրենց բոլոր կողմերով զուգորդվում ու առնչվում են ժողովրդի ֆիզիկական, մարտական և աշխատանքային դաստիարակության, հոգեֆիզիկական ակտիվության բարձրացման, կուլտուրական ժամանցի, զվարճալիքների և այլ կարևոր հարցերի հետ: Ներկայումս ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործընթացում նույնպես առաջնային է մարզակառույցների դերը և նշանակությունը: Այս տեսանկյունով մեր կողմից ներկայացվող նյութը արժեքավոր է: Մշակույթի, մասնավորապես ֆիզիկական կուլտուրայի արժեքների վերլուծությունը պահանջում է հնի և նորի անխզելիությունը: Ազգագրական, պատմագրական, բանահյուսական, լեզվական հարուստ տեղեկությունների հիման վրա ներկայացրել ենք Հին Հայաստանում խոշոր մարզակառույցների առկայությունը և նրանց նշանակությունը հայ ժողովրդի ռազմաֆիզիկական, ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման գործընթացում:

Հայաստանն հայտնի է եղել իր ճարտարապետական շինարարական արվեստով: Այժմ հին, միջնադարյան Հայաստանի հեթանոսական, հոգևոր և աշխարհիկ ճարտարապետական շինարարական արվեստը միջազգային լայն ճանաչման է արժանացել: Հայաստանի տարածքը, որին իրավամբ անվանում են «թանգարան բաց երկնքի տակ» հարուստ է ճարտարապետական կառույցներով և /շինություններով / վանքեր, բերդեր, տաճարներ, պալատներ, կամուրջներ, հուշարձաններ, քարավանատներ և այլն/, որոնցից մի մասը մեզ են հասել կանգուն կամ կիսականգուն վիճակում, իսկ մյուս մասը դարերի ընթացքում ավերվել ու ոչնչացվել են երկրաշարժից, օտարազգի բռնակալների հարձակումներից, քրիստոնեության կողմից և այլն:

Ինչ վերաբերվում է աշխարհիկ և հասարակական շինություններին, որոնց մեջ ներառվել են նաև մարզակառույցներն, ապա դրանցից ոչ մի հետք չի պահպանվել և

անհետացել են պատմության ասպարեզից: Սակայն ինչպես կտեսնենք ստորև հայ և օտարազգի պատմիչների մոտ, բանահյուսական և ազգագրական աղբյուրներում հին և միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցած մարզակառույցների մասին պահպանվել են հարուստ և հետաքրքրիչ վկայություններ, որոնք գիտական տեսակետից մեծ արժեք են ներկայացնում և կարևոր նյութ ծառայում հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի անցյալի պատմության ուսումնասիրման և զնահատման համար:

Ընդհանրապես հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար վիթխարի նշանակություն են ունեցել մարզակառույցներն են ու խաղահրապարակները, որոնք իրենց բոլոր կողմերով զուգորդվել ու առնչվել են ժողովրդի ֆիզիկական, մարտական և աշխատանքային դաստիարակության, հոգեֆիզիկական ակտիվության բարձրացման, կուլտուրական ժամանցի, զվարճալիքների և այլ կարևոր հարցերի հետ:

Ի դեպ, Հայաստանում գոյություն ունեցած մարզակառույցներն իրենց կառուցվածքային ոճով և մի շարք առանձնահատկություններով էապես տարբերվում են ժամանակակից մարզակառույցներից և համարվում են որպես վերջինիս նախատիպը: Իսկ իրենց բովանդակությամբ՝ աղերսվում և ամենալայն ընդհանրությունների մեջ են մտնում Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի մարզաշինարարությունների ու խաղահրապարակների հետ:

Ինչպիսին է քննարկվող հարցի ուսումնասիրման վիճակը: Նշենք, որ ներկա թեման իր կարևորությամբ դեռևս լայնորեն բացահայտված չէ, սակայն տարբեր բնույթի ուսումնասիրություններում այդ հարցի մասին որոշ ակնարկներ եղել են: Հին մարզակառույցների /մարզաշինությունների/ մասին առաջին անգամ խոսել են վենետիկյան միաբանության ներկայացուցիչները: Ղ. Ինճեճիանը<sup>1</sup>, Մ. Չամչյանը<sup>2</sup>, Մ. Բժշկյանը<sup>3</sup>, Ս. Տեր-Մովսիսյանը<sup>4</sup> նշել են, որ Արտաշեսյանների ժամանակաշրջանից սկսած հայերն ունեին հատուկ մարզարաններ և վարժարաններ, որտեղ մարզվում էին զանազան խաղերով ու ֆիզիկական վարժություններով: Վաստակաշատ հայագետները տարաբախտաբար միայն ակնարկել են, չեն խորացել հարցի ուսումնասիրության մեջ:

Մատենագրական աղբյուրները ցույց են տալիս նաև, որ հին և միջնադարյան շրջանում Հայաստանի քաղաքաշինությանը զուգահեռ հատուկ շինություններ են կատարվել նաև ինչպես վերնախավի, այնպես էլ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման նկատառումով:

Շահապիվանը հայկական Բագրևանդ գավառի /այժմ Ալաշկերտի գավառ/ գեղատեսիլ վայրերից մեկն էր, որ պատմիչները նաև Բագավան են անվանում:

Նշանավոր հայագետ Ալիշանի կարծիքով Բագավանը հունական Դիոսպոլիսի /աստվածաքաղաք/ նման մի վայր է եղել<sup>1</sup> Բագրևանդի նկարագիրը տալով Ղ. Ալիշանը գրում է. «Ի՞նչ գեղեցիկ հովիտ, մանավանդ թե ինչ ընդարձակ դաշտ»<sup>2</sup>, որտեղ հավաքվում էին ժողովուրդն ու բանակը, նշում նավասարդյան տոնախմբությունները և ի հիշատակ «քաջաց նախնյաց» կազմակերպում ու անցկացնում «մրցունք կտրչաց, խաղք և վայելեք հասարակաց»<sup>3</sup>:

«...շատ առանձին հանդեսներ էր կատարվում ձիարշավ անելով, եղջերու վազեցնելով...» և այլն<sup>4</sup> նշում է Կ.Կոստանյանը:

Ագաթանգեղոսի վկայությամբ հին հայկական նավասարդյան խաղերի վայրը՝ Աշտիշատ է անվանվել համաժողովրդական-մասսայական լինելու պատճառով «պաշտամունքի վայրի հաճախաշատ լինելու պատճառով անվանվում էր Աշտիշատ»<sup>5</sup> գրում է պատմիչը:

Շահապիվանի մարզակառույցների մասին առաջին անգամ կոնկրետ տեղեկություն է հաղորդում Փավստոս Բուզանդը /5դ/:

Այլ առիթների հետ կապվելով նավասարդյան տոների անցկացումը նա գրում է. «Թագավորի բանակը գտնվում էր Շահապիվանում, Արշակունիների բուն բանակատեղում, պարսպապատ որսատեղի տակ, ձիարշավի հրապարակի վրա»<sup>6</sup>:

Պատմիչի հաղորդումը ապացուցում է Շահապիվանում գոյություն ունեցած ձիարշավարանի /հիպոդրոմ/ մասին:

Հավաստի աղբյուրներից նույնպես տեղեկանում ենք, որ նավասարդյան խաղերի ծրագրում մի շարք խաղերի ու ֆիզիկական վարժությունների հետ անցկացվում էին նաև ձիարշավներ, կառարշավներ, հեծյալ մականախաղեր և այլն, ուրեմն դրանք նույնպես ձիարշավարանների գոյության ապացույցն են:

Թե ինչ չափսերի ինչ կառուցվածքների են եղել ձիարշավարանները, այդ մասին պատմիչների մոտ ոչ մի փաստ չի գրանցված: Դրա վերաբերյալ Ղ. Ալիշանի մոտ այսպիսի մի ակնարկ կա, որ տոնախմբությունները և դրանց հետ կապված խաղերը անցկացվում էին մի «տաշտանման հովտում», «ծվածն» կառուցվածքով, որ մի քանի մղոն տարածվում էր երկարությամբ Արևելքից-Արևմուտք և լայնությամբ «ի հյուսիսի ընդ հարավ»<sup>7</sup>:

Փ.Բուզանդի նշված հաղորդումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Շահապիվանում բացի ձիարշավարանից գոյություն են ունեցել նաև «պարսպապատ որսատեղեր» և «բանակատեղ» /ռազմադաշտ՝ մարզական իմաստով/, որ նույնպես մարզակառույցների շարքին պետք է դասել հատուկ պատրաստված որսատեղերը, ինչպես նաև ռազմաֆիզիկական գործողությունների համար հատուկ և հարմար ռազմադաշտերը իրենց հերթին նույնպես մարզավայրեր են հանդիսացել<sup>3</sup>:

Դրանք իրենց կառուցվածքային տեսակետից համապատասխան և հարմարավետ են եղել առանձին խաղերի ու ֆիզիկական վարժությունների ուսուցման ռազմական կատարելագործվելու, ինչպես նաև մրցումների կազմակերպման անցկացման, ցուցադրական ելույթների համար և այլն:

Դժբախտաբար հնագիտական պեղումներից դեռևս չեն հայտնաբերել փակ մարզկառույցների ոչ մի հետք, իսկ սրանք անշուշտ արժեքավոր նյութեր կարող էին ծառայել ինչպես ճարտարագիտական արվեստի, այնպես էլ հայ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության պատմության մի շարք մասնագիտական հարցեր լուծելու համար:

Սակայն այդ բացը լրացվում է լեզվական ու պատմագրական, ինչպես նաև ազգագրական ու բանահյուսական աղբյուրների վկայություններով:

Այս աղբյուրների հիման վրա առաջին անգամ մենք պետք է քննարկենք հին ու միջնադարյան Հայաստանում մարզկառույցների գոյության հարցը, պարզաբանենք դրանց տեսակները ըստ մարզաձևերի ու խաղերի, ցույց տանք կարևոր մարզկառույցների վայրերը և որոշ չափով էլ խոսենք դրանց կառուցվածքային ոճի ու չափսերի մասին:

**ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՊԱՅՊԱՆՎԱԾ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հարցի լուսաբանմանը մեծապես նպաստում են և գիտական մեծ արժեք են ներկայացնում հայոց լեզվի բառապաշարում /գրաբարի, աշխարհաբարի, բարբառների, թարգմանական գրականության և այլն/ դարեր շարունակ շրջանառության մեջ մտած բազմազան ու բազմաբովանդակ բառերն ու տերմինները: Քննարկվող հարցի նկատառումով դրանք մի կողմից իմաստ են պարունակում, իսկ մյուս կողմից միահյուսվելով պատմագրական, ազգագրական և բանահյուսության աղբյուրներում արտացոլված համապատասխան մտքերի հետ, ավելի արտահայտիչ են դարձնում հին և միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցած մարզակառույցների առկայությունը:

Հարկ է նշել, որ հայկական մարզատերմինների և բառերի շարքում նկատվում են պարսկական, հունական, արաբական, ռուսական և այլ ժողովուրդների բառապաշարում ճգտագործված առանցքին բառեր և տերմիններ, որոնք փոխազդեցությունների արդյունք հանդիսանալով հանդերձ օժանդակում են այս կամ այն հարցի պարզաբանմանը:

**Ասպարեզ:** Այս բառը ակնբախորեն բացահայտում է մարզաշինությունների հետ անմիջապես առնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության համակարգում անփոփոխ ֆիզիկական վարժությունների ու խաղերի ուսուցումն ու մարզումը, մրցույթների ու ցուցադրական ելույթների կազմակերպումն ու անցկացումը և այլն: Հայերենում «ասպարեզ» բառը ունի հիմնականում երեք իմաստավորում՝ մրցավայր, երկայնության չափ, զբաղմունքի բնագավառ: Հին հայերենում գործածվում էին թե՛ «ասպարես», և թե՛ «ասպարեզ» բառերը, իսկ արդի գրական լեզվում օգտագործվում է միայն վերջինս:

Հ.Աճառյանը «ասպարեզ» բառը ներկայացնում է «բաց դաշտ, հրապարակ, հանդիսարան, ձիարշավարան, կրկես, մրցարան» հասկացությունների ներքո /8/: Ստ.Մալխասյանի մոտ ասպարեզ բառը նույնպես մի քանի իմաստավորում ունի: Դրանք են՝ «հրապարակ, ձի վազեցնելու համար արծակ տեղ, սկուտեղ /նետողների համար/ և այլն» /9/:

Ազաթանգեղոսը Տրդատ Մեծի մենամարտերն ու հաղթանակները նկարագրելիս գրում է. «...հսկայի զորությամբ ասպարեզ գալով, բազում քաջագործություններ էր ցույց տվել» /10/:

«Ասպարեզ» բառի մեկնաբանումը տարածության, չափի իմաստով նույնպես ունի կարևոր նշանակություն տվյալ թեմայի բացահայտման համար: Այս իմաստով

հարուստ տեղեկություններ են պահպանված մատենագրական աղբյուրներում: Մ.Խորենացին Հայկի և Բելի ճակատամարտի մասին գրում է. «Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով» հասնում են «մի դաշտաձև տեղ»: Մեկ այլ օրինակ՝ «միմիյանց մոտ գալով մեջտեղը երկար ասպարեզներ թողած, երկու կողմերն անրանում են բավական օրերի ընթացքում», իսկ Սմբատի և Երվանդի պատերազմական գործողություններից ձիարշավի պատկերը ներկայացնելով գրում է. «Իսկ Երվանդը ձիով շատ ասպարեզներ անցնելով ... նոր-նոր ձիեր հեծնելով փախչում էր»:

Ասպարեզ բառի իմաստը երկայնաչափական իմաստով ներկա թեմայի հետ առնչվում է ոչ միայն ստադիոնների, ձիարշավարանների, խաղող-հրապարակների և այլ մարզակառույցների չափերը որոշելու, այլ նաև կառարշավների, ձիարշավարանների, միջին ու երկար տարածության արշավների տարածական չափսերի մասին գաղափար կազմելու համար: Այդ նկատառումով էլ ասպարեզ հասկացությունը այս պարագայում պահանջում է նոր վերլուծություն: Պետք է նշել, որ ստադիոն և ասպարեզ հասկացողությունները զուգաշփեք մտանկություն ունեն: Հայտնի է, որ ստադիոնները, որպես տարածության չափեր առաջին անգամ երկրաչափական ձևերից շրջանառության մեջ են մտցվել Բաբելոնում և ապա Հունաստանում: Ասպարեզ բառի տարածաչափական իմաստը ուսումնասիրել են գերմանացի գիտնականները, որոնք հարցը քննարկել են հայկական ասպարեզ և հունական ստադիոն բառերի զուգահավասար մեկնաբանմամբ:

Հայկական մատենագրական աղբյուրներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանազան միջադեպերի հետ առնչվել են տարածության այլ չափեր /կանգուն, փարսախ կամ հարսախ, ֆուտ, ձիընթաց/ որոնք նույնպես ապացուցում են հին և միջնադարյան Հայաստանում մարզաշինությունների և խոշոր խաղ-հրապարակների գոյությունը:

**Մարզարան – /մարզանոց-մարզատուն/:** Հայաստանում մարզական շինությունների գոյության մասին վառ վկայություն է լեզվական և մատենագրական նյութերում հանդիպող «մարզարան» բառը, այն հույների մոտ անվանվել է գիմնազիում /մերկամրցարան/:

Մարզարան բառի արմատն է «մարզ», որ նշանակում է «կռվի կամ զինվորական վարժության վայր»: Ըստ Հ.Աճառյանի՝ մարզարան նշանակում է «կռվելու կամ զինվորական վարժության տեղ», սակայն կարելի է հասկանալ, որ այն բոլոր բնույթի վարժությունների վարժվելու վայր էր: Այս տեսակետից Ստ.Մալխասյանը բացատրում է այդ բառի իմաստը, որպես «մարզությունների տեղ»: Այս համատեքստում Հ.Աճառյանի բացատրությունը համընկնում է «մարտանոց» կամ

«կռվանոց» բառին, որը ունի նույն «մարգարանի» իմաստը և յուրահատուկ է մենամարտերի վարժություններին: Ի վերջո մարգարան բառի իմաստը մարզվելն է, իսկ վերջինս չի սահմանափակվում միայն մենամարտերի կամ զինվորական վարժությունների շրջանակներում. այն ունի ընդհանուր հասկացողություն: Մարգարաններում նույնիսկ ուսուցանել են նետաձգության և որսորդական հնարները: Մատենագրական և ազգագրական նյութերում մարգարան բառը համազոր է երիտասարդանոց բառին, որն ըստ Ստ.Մալխասյանի բացատրության նշանակում է «կրկես կամ մարգարան երիտասարդների համար» , իսկ Հայկազյան բառարանում «շրջափակ վայր խաղակաց» , նաև վարժարան, վարժատուն, «մեծ տուն» բառերին: Այս առիթով հետաքրքիր է նշել Եզնիկ Կողբացու կողմից ներկայացված մարգարանի բնութագրումը, որտեղ մարզվել են ըմբիշները, կռիվամարտիկները և այլն:

Ժամանակի մեծ մտածողը այդ մարգարանը, որպես ռազմաֆիզիկական դաստիարակության վայր, իրավամբ ներկայացրել է «մեծ տուն» անվան տակ, որտեղ մարզիչները մարզումների ընթացքում կիրառել են նաև պատժիչ մեթոդներ: Նա նշում է, որ «Մեծ տան» պատից կախված էր լինում մտրակ «ուրիշների սիրտը երկյուղ զցելու համար» /Երևան, 1970/:

Վ.Հացունին միանգամայն ճիշտ է նկատել, որ «Եթե մեր մեջ սովորական էր մրմնոյ կրթությունը, ոյս պարագան կպահանջե, որ լինեին և հատուկ մարգարանք» /Վենետիկ, 1923/:

**Երիտասարդանոց:** Երիտասարդանոցների գոյությունը հայկական լեռնաշխարհի պայմաններում շատ հին պատմություն ունի: Ժամանակագրական առումով այն ձգվում է դեպի նախնադար: Դրանք իրենց կառուցվածքային ոճով պատկանում են փակ մարզաշինությունների շարքին, որ շատ անհրաժեշտ էին ու պիտանի Հայաստանի կլիմայական պայմաններում: Բնիկները դրանք կառուցում էին գետնափորերում, իսկ լեռնային վայրերում ժայռափոր տներ էին ստեղծում, որոնց հետքերը պահպանվել են մինչև օրս: Ավելի ուշ շրջանում հայերը գետնափոր ու քարանձավային վայրերից դուրս են գալիս և տների ու այլ շինությունների հետ կառուցում են նաև երիտասարդանոցներ /Ս.Վարդանյան, Երևան, 1959/:

Բառարանագիտական աղբյուրներում «երիտասարդանոց» բառը հասկացվում է «կրկես կամ մարգարան երիտասարդների համար» նաև «շրջափակ վայր խաղալու համար» , «ասպարեզ» /Հայկազեան նոր բառարան, հատ.Ա., 1134/:

**Մրցարան:** Մրցում, մրցել բառն է, լեզվական նյութերում «մրցարան»-ը հասկացվում է «մրցման վայր»: Մրցարանը, որպես մենամարտողների ասպարեզ



առաջին անգամ տեղեկացնում է Ռ.Ոսկեբերանը «ի տեղ մրցարանքն» արտահայտությամբ /Վեցնտիկ, 1862/:

**Գուպարատեղ:** Գուպար նշանակում է կռիվ, պատերազմ, մենամարտ, մրցություն և հետևապես մենամարտելու վայր / Գիրք Պիտոյից, Վեցնտիկ, 1865/: Գուպարատեղ բառը պետք է հասկանալ հիմնականում մենամարտերի հրապարակների իմաստով:

**Կրկես:** Պատմագրական աղբյուրներում կրկես բառը հանդես է գալիս թե որպես փակ շինություն և թե որպես բացօդյա: Բացի այդ կրկես բառը հասկացվում է նաև որպես մենամարտերի, ձիարշավարանների, կառարշավների և ընդհանրապես խաղերի ցուցադրման վայր: Ստ.Մալխասյանի մոտ կրկես բառը բացատրվում է «Շրջափակ հրապարակ», որտեղ կատարվում էին գլադիատորների խաղեր, ըմբշամարտություն, մարզանքներ, ձիարշավ և այլն» /ՅԲԲ, 2-րդ/:

**Հրապարակ-մեյդան:** Լեզվական, պատմագրական, բանահյուսական և ազգագրական աղբյուրներում այդ բառերը օգտագործվում են հիմնականում երկու իմաստով.

- որպես ժողովրդական հավաքատեղիների /առևտրական հրապարակներ, գյուղական կամ քաղաքային հրապարակներ, արքունական հրապարակներ, պատժիչ հրապարակներ և այլն:
- օգտագործում են խաղերի ու ֆիզիկական վարժությունների ուսուցման ու մարզման, ինչպես նաև մրցույթների անցկացման և ցուցադրական ելույթների իմաստով:

Հրապարակ կամ մեյդան բառերը շատ դեպքերում նաև կոնկրետ իմաստավորում են ստանում. Օրինակ. «Ըմբշամրտի հրապարակ», «ձիարշավի հրապարակ», «մարտահրապարակ» և այլն: Բացի այդ ժողովրդական զվարճալիքների համար գոյություն ունեին Հայաստանի տարբեր գավառներում նաև կենդանիներ կռվացնելու հատուկ հրապարակներ /խրախճարան, զվարճարան/, որտեղ ցուցադրվում էին աքլորակռիվներ, խոչակռիվներ, զոմշակռիվներ և այլն /Ա.Ղանալանյան, Ավանդապատում/: Հաճախ նման հրապարակներում մարդիկ իրենց ուժերն էին չափում կենդանիների հետ:

**Նավակայան-թիավարան:** Հին և միջնադարյան Հայաստանի մարզակառույցների ցանցում հատուկ տեղ են գրավել նավավարության կամ թիավարության բազաները, որոնք եղել են լճերին ու գետերին կից հարմարավետ վայրերում: Թովմա Արծրունու վկայությունից /Հայոց պատմություն/ երևում է, որ Գագիկ Արծրունին մեծ նշանակություն է տվել Վանա լճում նավարկության-թիավարության բազաների ստեղծմանը: Նա «ստեղծեց ... նավահանգիստ՝ նավերի խմբի համար» գրում է պատմիչը: Թիավարության բազաներ կային նաև Հայաստանի

մեծ գետերի ափերին: Դա կապված էր նաև առևտրական, տնտեսական հարցերի, ինչպես նաև ձկնորսության հետ: Այս նավակայաններում անցկացվել են նաև մակույկներով մարզումներ ու մրցումներ:

**Ջինամարզարան կամ զինաշարժարան:** Նման մարզաշինությունները եղել են ինչպես փակ, այնպես էլ բացօդյա պայմաններում: Դրանք մի կողմից մեծ կամ փոքր հրապարակներ, ընդարձակ դաշտեր են եղել, իսկ մյուս կողմից փակ շինություններ-դահլիճներ են: Ստ.Մալխասյանը իրավամբ այդ բառերի բացատրության տակ հասկանում էր «զինամարզական դահլիճ»: Սակայն զինամարզության բառի տակ հասկանալ միայն սրերով կատարվող մարզություն, ինչպես ընդունում է Ստ.Մալխասյանը գտնում է, որ ճիշտ չէ, «զինամարզություն» բառի տակ պետք է հասկանալ զենքերով և անզեն մարտական վարժություններ:

**Հոլարան:** Բառարանագիտական աղբյուրներում այս բառը հասկացվում է «ըմբշամարտողների կրկես» կամ «ըմբշամարտության կրկես, որտեղ ըմբիշները մրցում էին իրար հետ մերկացած»: Սակայն ազգագրական աղբյուրներում տեղ գտած հոլարան բառը ունի ընդարձակ հասկացողություն: Օրինակ. Մ.Կաղանկատվացին /Պատմություն հայոց/ նշում է, որ հոլարան-մրցահրապարակներում բացի ըմբշամարտից շեշտում է նաև դաշույնամարտի և սրամարտերի մրցույթները, նաև. «հոլարաններում աթլետները խաղեր էին խաղում և պարեր բորբոքում»:

**Կռվանոց:** Հին և միջնադարյան Հայաստանում «կռվանոց» բառի անվան տակ հասկացվել է մենամարտերի ուսումնա-մարզական շինություն, որտեղ հաճախ մարզիչների ներկայությամբ անցկացվում էին պարապմունքներ. կռվանոցների մասին հայ մատենագրական նյութերում առաջին տեղեկությունը հայտնում է Ժամանկի մեծ մտածող Եզնիկ Կողբացին /5-րդ դար/: Նա նշում է կռվանոցների մեջ հաճախ էր նկատվում արյուն, վնասվածքներ մրցակիցների դեմքին և իրանին, ականջները պատռված և այլն /Եղծ Աղանդոց, Վենետիկ, 1826/:

Ստ.Մալխասյանցը կռվանոց բառը բացատրում է հետևյալ կերպ. «կըռուարան, շենք, հիմնարկ, որտեղ մարզիկները կռվի էին բռնվում, վրժություններ էին անում, մարզվում» /ՀԲԲ, 2-րդ հատոր/:

**Հանդես:** Բառարանագիտական աղբյուրներում «հանդես» բառը հասկացվում է «ասպարեզ» մրցարան, հրապարակ, որտեղ մարդիկ ցույց են տալիս իրենց ուժը /Ստ.Մալխասյան, ՀԲԲ, 3-րդ հատոր/: Այստեղից էլ ծագում է հանդիսադիր բառը, որն է. «մրցավար, մրցման հանդեսը կազմող, մրցանակ տվող, մրցման հանդեսի մեջ գլխավորը»:

«Հանդես» բառի տակ պետք է հասկանալ նաև մասսայական բնույթ կրող մարզական միջոցառումները, որն հայերենում ընդունված է անվանել մրցահանդես, տոնահանդես, խաղերի հանդես և այլն:

**Դաշտ, խաղադաշտ, ռազմադաշտ:** Լեզվական և մատենագրական աղբյուրներում շատ են գործածվում այս բառերը ռազմաֆիզիկական դաստիարակության նկատառումով: Նշված վայրերը բնության կողմից ստեղծված, իսկ որոշ դեպքերում էլ փոփոխման ենթարկված այն վայրերն են, որոնք ծառայել են իբրև մարզաշինություններ՝ զանազան խաղերի, ֆիզիկական վարժությունների և զորքերի մարզումների համար: Հայկական լեռնաշխարհի տարածքը հարուստ է եղել նման վայրերով: Այսպես. Տիգրան Մեծի օրոք հայոց զորքը մարզվել է «Ձորադաշտ» կոչվող վայրում, որը գտնվում էր Տիգրանակերտի շրջակայքում /Յ.Սանանդյան, Տիգրան 2-րդը և Հռոմը/:

Վաղարշակ թագավորը զորքերը մարզում էր Մեծամորի դաշտում «Այստեղ մեր աշխարհիկ զորքերը կարգավորվելով, մարզվելով, զինվելով... չվում են Մծբին», նշում է Մ.Խորենացին: Ալ.Մակեդոնացին, երբ Դարեհի հետ պատրաստվում էր պատերազմի իր զորքերին մարզելու և սպառազինելու համար կառուցում է «Ստրատեգիոն կոչվածը, որովհետև այստեղ նա կազմակերպեց իր պատերազմական սարքը»: Նման մի ռազմադաշտ էր նաև Մուղանի ընդարձակ և հարմարավետ տարածքը /Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1982/:

**Հավուզ:** Մատենագրական, ազգագրական ու բանահյուսական աղբյուրներում պահպանված տեղեկություններից հայտնի է, որ Հյաստանում տարբեր վայրերում գոյություն են ունեցել բնական և արհեստական լողավազաններ: Դրանց գոյությունը մի կողմից կապվում է ջրի պաշտամունքի, իսկ մյուս կողմից լող մարզաձևում ուսումնամարզական գործընթացի և օրգանիզմի կոփման հարցերի հետ:

Նշենք, որ գոյություն են ունեցել նաև արքունական լողավազաններ: Լողավազանների գոյությունը Հայաստանում վառ կերպով արտահայտվել է մեր էպոսում. Դավիթն ասում է. «Մտնիմ հավուզ լողկնամ, Նորեն հելիմ կռիվ անիմ»:

**Որսատեղ:** Հայաստանում կային արքունական որսատեղեր կառուցապատ և ցանցապատ վիճակում, դրանք յուրօրինակ մարզավայրեր էին, որտեղ հաճախ իրենց մարզումներն էին անցկացնում նախարարական տների ներկայացուցիչները և հայկական զորքը: Փ.Բուզանդը այդ վայրերը անվանում է «որսատեղ», «որսերի արգելանոց», «արքունի որսատեղ» և այլն: Որսավայրերի մասին հարուստ փաստեր կան հայկական բազմաբնույթ աղբյուրներում:

**Խրախճատեղի:** Ակտիվ հանգստի անցկացման վայր: Նաև զբոսավայր: Անանուն Արծրունի պատմիճը նշում է, որ Գագիկ Արծրունին «ճվաշուտի գետն ավանում շինեց

վայելուչ խրախճատեղի»: Պատմիչի վկայությամբ դա «մի բլուր էր, որը շրջապատված էր տարբեր շինություններով», որ ծառայում էր նաև «որսի հաճույքների համար»:

**Նետաձգարան:** Պատանիներն ու երիտասարդները հատուկ վայր էին ընտրում և հարմար տեղում թիրախ կամ որևէ իր փակցնելով նետաձգության մրցումներ էին անցկացնում: Նետաձգության հրապարկների վերաբերյալ առաջին գրավոր տեղեկությունը պահպանվել է ուրարտական արձանագրություններից մեկում. «գիլուրանի անտառի առջևից մինչև Բաթուի որդի Իշպիլինի այգու մոտ» վայրը, որտեղ Արգիշտի Բ-ի արձակած նետը անցել է բավական հեռու տարածություն: Նետաձգատեղերը արտացոլվել են նաև մեր էպոսում: Նման հրապարակում են նշանառության մրցում անցկացվել Փոքր Սիերի և Գոհարի միջև:

**Չեծելեն, հեծելաշարժարան:** Այս բառերը ձիարշավարանների ու ձիավարժությունների հրապարակների իմաստն ունեն: «Չեծելեն» բառը մարզական իմաստով գործածվում է հայկական միջնադարյան «Ֆարմանի մանկան» պոեմում «խաղայ իւր լաւ ձիովն, ի հեծելեն մտնու ֆարման» և այլ այսպիսի օրինակներ:

**Ջիրինդատեղ:** Ջիրինդ խաղալու հրապարակ /մականահրապարակ/: Այս հասկացությունը շոտ ենք հանդիպում ազգագրական աղբյուրներում և էպոսում:

**Վարժանոց-վարժարան:** Վարժությունների, մարզանքների վայր: Առընչվում է նաև վարժության և վարժություն ուսուցանող՝ վարժապետ հասկացողությունների հետ: Ստ.Մալխասյանի բառարանում վարժապետ բառի տակ հասկացվում է նաև «ըմբշամարտեան մարզանքների հրահանգիչ, մարզանքների վերակացու» /ԶԲԲ, 5-րդ հատոր/: Նշված բառերի հետ է առնչվում նաև վարժատուն հասկացողությունը, որն նույն իմաստն ունի:

**Վարդապետարան-վարդապետանոց:** Նշանակում է ուսանելու տեղ, վարժատուն, վարժոց: Բառի հիմքը վարդապետն է, որը հասկացվում է նաև վարժություն, ուսում, պետ, հետևապես և վարժություն ուսուցանող:

**Ջրահանգարան:** Նշանակում է կրթարան, վարժարան: Բառի արմատն է հրահանգ, որ հասկացվում է նաև «վարժություն, ֆիզիկական կրթություն, մարզանք, մրցանք», հետևապես և «ֆիզիկական կրթության տեղ, մրցարան, մարզարան, ասպարեզ»: Այստեղից էլ հրահանգիչ ու նաև մարզիչ:

**Կրթարան:** Բառի արմատն է կրթել, որն է «մարզանքներով՝ վարժություններով զարգացնել ֆիզիկական... կարողությունները»: Կրթանքի ուսուցման վայր կամ տուն, շինություն, մարզանքի տեղ, մրցարան: Նման կրթարաններում էին մարզվում աթլետները, «որ աշխարհագրական հաղթանակներ էին տանում»:

**Դաստիարակարան:** Դաստիարակության տեղ: Հասկացվում է նաև ֆիզիկական դաստիարակության վայր, որտեղ պատանիներն ու երիտասարդները մարզվում ու

կռվում էին իրենց տարբեր խաղերով ու ֆիզիկական վարժություններով: Այս բառի անվան տակ պետք է հասկանալ ինչպես փակ, այնպես էլ բացօդյա մարզականությունները:

**Արշավատեղ-Արշավահանդես-Արշավարան:** Վազքի տեղ, վազքուղիներ:

**Սկյութատեղ:** Աթլետիկական հրապարակ, որտեղ ժամանակակալից սկավառակին նմանվող տափակ քարեր էին նետում, շրջանակ նետում: Այն կապվում է սկավառակի նետման հրապարակ հասկացողության հետ:

Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ ժողովրդական խաղերի և մրցույթների վայրեր են հանդիսացել նաև.

ա. պալատական սրահները. վերնախավի համար կազմակերպվող թատերական և գուսանական ելույթներից բացի նման սրահներում կազմակերպվում և անցկացվում էին նաև մենամարտեր և այլ խաղեր,

բ. գոմերը. մեծ չափի գոմերում ձմռանը հաճախ հավաքվում էին պատանիները ու երիտասարդները: Կազմակերպվել են խաղեր, մրցումներ, ուժփորձուկներ կենդանիների վրա և այլն,

գ. կալերը. Գյուղական պատանիների ու երիտասարդների համար կալերը ֆիզիկական վարժությունների ու խաղերի համար ամենասիրած վայրերից մեկն է համարվել: Հաճախ գյուղի երիտասարդությունը «ձմռան լավ օրերին... թամբում էին իրենց որձ ձիերը, հեծնում և գյուղից դուրս գալիս կալերը՝ ջիրիթ խաղալու»:

Եկեղեցիների բակերում խաղ հրապարակների գոյության արմատները պետք է փնտրել դեռևս հեթանոսության ժամանակաշրջանից, քանի որ հեթանոսական տաճարներ-վայրեր քրիստոնեության ժամանակաշրջանում ինքնըստինքյան վերածվում էին եկեղեցական շինությունների: Այդպես էր օրինակ Ս.Կարապետի վանքը, Էջմիածնի մայր տաճարը և այլն: Հայտնի է, որ հեթանոսության ժամանակաշրջանում աստվածություններին նվիրված տաճարները, որպես պաշտամունքային շինությունների իրենց շուրջն էին համախմբում հավատացյալ ժողովրդին, որտեղ կրոնածիսական առանձին արարողությունների /գոհաբերությունների, նվիրատվությունների և այլն/ հետ միասին հեթանոս հայերը մեծ շուքով կազմակերպում և անցկացնում էին նաև զանազան խաղեր, ֆիզիկական վարժությունների մրցույթներ, թատերակրկեսային ներկայացումներ նվիրված աստվածներին՝ Հայկին, Վահագնին, Արային և այլն: Ահա այս սովորույթներն էին, որ ժամանակի ընթացքում փոխանցվեցին քրիստոնեության շրջանին և հեթանոսական տաճարների խաղ հրապարակներից վերածվեցին եկեղեցական բակերի հրապարակներին:

ժողովրդական տարբեր բնույթի խաղերի վայրեր են ծառայել նաև կտուրները. ազգագրագետ Վ.Բդոյանը իրավամբ այն միացյալ կտուրները, որտեղ անցկացվում էին մի շարք ժողովրդական խաղեր, անվանում է կտուր-հրապարակներ /Յայ ժողովրդական խաղեր, Եր., 1974/: Ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքներում բազմաթիվ են եղել միացյալ տները, որոնց կտուրները մի ընդարձակ և հարթ տարածություններ են կազմել և հնարավորություն ստեղծել պատանիներին և երիտասարդներին կազմակերպելու խաղեր ու մրցումներ:

Ուսումնամեթոդական ձեռնարկի ներկա բաժնում մեջբերված և քննարկված լեզվագիտական, պատմագրական, բանահյուսության և մասամբ էլ հնագիտական հարուստ նյութերը ապացուցում են, որ հին և միջնադարյան Յայաստանը հարուստ է եղել փակ ու բացօդյա մարզաշինություններով, խաղերի ու ֆիզիկական վարժությունների ուսուցման ու մարզման վայրերով ու օջախներով, մրցույթների կազմակերպման ու անցկացման շինություններով:

Դրանք իրենց հերթին խոշոր դեր են խաղացել ժողովրդի, հատկապես պատանիների ու երիտասարդների ֆիզիկական զարգացման, մարտական պատրաստության և ընդհանրապես ռազմաֆիզիկական դաստիարակության գործի արդյունավետ և հպատակասլաց կազմակերպման համար:

Մարզաշինություններն ու խաղահրապարակներն միաժամանակ հանդիսացել են ժողովրդի տարբեր խավերի զվարճությունների, ակտիվ հանգստի և նպատակային ժամանցի անցկացման վայրեր: Դա անհրաժեշտ էր հատկապես աշխատավոր ժողովրդի ֆիզիկական բեռնվածությունը թթափելու և էնոցիոնալ վիճակը բարձրացնելու համար: Դա պատահական երևույթ չպետք է համարել. ժողովուրդը լավ է գիտակցել այդ, որի ապացույցն է ցանկացած մրցություններին բազմամբոխ ներկայությունը, հատկապես ազատ ժամերին ու ազատ օրերին:

## **ԽՈՇՈՐ ՄԱՐԶԱՎԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հայ և օտարազգի պատմագրական աղբյուրներում, ազգագրական, բանահյուսական և լեզվական նյութերում հարուստ տեղեկություններ են պահպանված հին և միջնադարյան Հայաստանի մարզակառույցների ու խաղ-հրապարակների մասին: Այս առնչությամբ հետաքրքիր է պարզել թե պատմական Հայաստանի որ վարչա-աշխարհագրական տարածքներում կամ քաղաքներում են գտնվել խոշոր մարզավայրերն ու խաղ-հրապարակները, որոնք և հանդիսացել են մասսայական-համաժողովրդական մրցությունների ու մարզումների վայրեր և իրենց նշանակությամբ մեծ դեր խաղացել հայ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման համար:

Սկզբից նշենք, որ ինչպես մյուս ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը փոքր ու մեծ մասշտաբի մրցություններն ու թատերակրեսային ներկայացումները, որոնց հետ միասին ֆիզիկական վարժությունների ու խաղերի ուսուցումն ու մարզումները անցկացրել են տարբեր չափսերի մարզաշինություններում: Ամեն մի գյուղ, շրջան, քաղաք կամ գավառ ունեցել են իրենց խաղ-մարզական կենտրոնները, եղել են նաև համաժողովրդական տոնահանդեսների և մրցությունների մշտական կենտրոններ /սրբավայրեր, ուխտատեղիներ և այլն/: Թե ե՞րբ է Հայաստանի տերիտորիայում ձևավորվել մարզակառույցների շինությունները, այդ մասին թվական ճշգրիտ տվյալներ չունենք, սակայն դրանց սաղմերը պետք է տեսնել ուրարտական և հունական, համանման մշակույթների մեջ: Այսինքն չպետք է ժխտել ուրարտական և հելենիստական մշակույթների, որոնց թվում և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազդեցությունը հայկականի վրա: Այլ խոսքով այդ հարցի պատասխանը պետք է կապել հենց նշված ժամանակաշրջանների հետ:

### **Վասպուրականի մարզակառույցները**

Արևմտյան Հայաստանի պատմական տարածքում մարզակառույցի գոյության մասին առաջին գրավոր վկայությունը մենք քաղում ենք ուրարտական սեպագիր արձանագրություններից:

Վան քաղաքից քիչ հեռու գտնվող Աղդա գյուղի մոտ, քարի վրա ուրարտական թագավոր Մենուան /810-786թթ./ թողել է մի փոքրիկ արձանագրություն հետևյալ բովանդակությամբ՝ «Խալդի աստծո զորությամբ Մենուան, որդին Իշպունիհի, ասում

է.այս վայրում Արծիբի անունով ձին, որի վրա նստած էր Մենուան, ցատկեց 22 կանգուն»<sup>1</sup>: Նշված տեքստը վերծանելիս, ակադեմիկոս Բ.Պիոտրովսկին արել է հետևյալ եզրակացությունը՝ «Այս տեքստում արտացոլված է ուրարտացի թագավորի սպորտային նշանավոր նվաճումը, որի ձին ցատկել է 22 կանգուն, այսինքն 11,4մ. տարածություն»<sup>2</sup>:

Հետաքրքիր է նշել, որ Վանի շրջակայքում գտնվող ձիավարության այն մարզակառույցը, որտեղ Մենուան վարժել է իր ձիուն, Բ.Պիոտրովսկին իրավամբ անվանում է հիպպոդրոմ:

Վանի շրջակայքում և Հայկավանք թաղամասում նետածգության հրապարակի գոյության մասին կարևոր վկայություն է ուրարտական մեկ այլ արձանագրության հետևյալ հաղորդումը՝ «Թագավորը./Արգիշտին-Կ.Ա./... բաց թողեց նետը այստեղից՝ Գիլուրանիի անտառի առջևից, մինչև իշպիլինիի, Բատուի որդու, այգին 950 կանգուն /տարածությամբ/<sup>3</sup>»:

Նշված արձանագրությունների տեքստերից դժվար չէ կռահել, որ ուրարտական արքայական տոհմի ներկայացուցիչները հաճախ են մարզվել ռազմաֆիզիկական վարժություններով. հետևապես և պետք է որ իրենց մասնավոր ու տաճարային տնտեսություններին կից ունենային նաև իրենց ռազմա-մարզական բազաները: Այս միտքը պետք է հիմնավորել նաև նրանով, որ Ուրարտուն ռազմական հզոր պոտենցիալ ներկայացնող ստրկատիրական մի պետություն էր, ուներ ռազմական տեխնիկայով ու տակտիկայով հագեցված զինված խավի ներկայացուցիչները: Պարզ է, որ զորքերը մարզելու համար, առաջին հերթին պետք է մարզվեին և վարժ լինեին ռազմաֆիզիկական վարժությունների մեջ:

Տարբեր աղբյուրներում պահպանված փաստերը ցույց են տալիս, որ Վանի շրջակայքի մարզակառույցները պահպանվել են նաև հետագա դարերում և ավանդաբար փոխանցվել հաջորդ սերունդներին:

Բ. Պիոտրովսկին խոսելով Վանի թագավորության անցքերի և հատկապես Վասպուրականի նախարարությունների մասին նշում է, որ միջնադարում Վասպուրականի նախարարները իրենց ձիավարություններն ու մարզումները անցկացնում էին Վանի հյուսիս-արևելյան շրջանի «Սիգկեխ» տեղանքում, որին ստադիոն է անվանում:

Մատենադարանում պահպանված մի ձեռագրում, վանեցի բանահավաք Եր. Տևկանցը ներկայացնելով ժողովրդական խաղերի մի ամբողջ շարան, միաժամանակ տեղեկություն է տալիս Վանի շրջակայքի հայկական գյուղի մոտ գոյություն ունեցած մարզական «մեծ հրապարակի» մասին, որտեղ համաժողովրդական մարզախաղեր են անցկացվել: Նա գրում է. «մի տարի բարեկենդանի օր սույն չվանոցիկ խաղ



Չայկավանից մեծ հրապարակի մեջ խաղացին: 100-120 հոգի ժողոված էին, չվանի միջի մարդուն զարնելու»<sup>1</sup>: Հեղինակի վկայությամբ նման մրցումները անցկացվել են թաղերի ու գյուղերի միջև հենց նույն վայրում:

Ավելի հետաքրքիր տեղեկություն է Գ.Սրվանձոյանի վկայությունը: Իր շրջագայության ընթացքում Վանի շրջակայքում՝ նույն Չայկավանում նկատել է կահավորված և զարդարված մի ձիարշավարան, որին «ասպարեզ» և «մեյդան» է անվանում: Տեղաբնիկները այդ ձիարշավարանին «ավազուտ ասպարեզ», «ավզնոց» կամ «Արարուց մեյդան» են անվանել, որտեղ «ամեն տարի Ջատկի նոր կիրակիին հայ ու տաճիկ՝ ... ձիերը հեծած կուզան ջիրինտ կը խաղան»<sup>2</sup>:

Մարզակառույցների բնութագրման համար կարևոր արժեք է ներկայացնում նույն հեղինակի նշված ձիարշավարանի բնութագրումը. «Ահա տափակ և ընդարձակ դաշտ մը, զարդարված ծառաստաններով, և բաժանված զատ-զատ պատվերով»<sup>1</sup>, նշում է նա: Ուշագրավ է, որ այս ձիարշավարան մարզակառույցը երկար ժամանակ հանդիսացել է նաև հայկական նավասարդյան խաղերի անցկացման հիմնական կենտրոններից մեկը: Խաղեր, որոնք մինչև 19-րդ դարը պահպանվել և միջագային բնույթ են կրել, և որին մասնակից են եղել քոդերը, եզդիները, հայերը, պարսիկները, թուրքերը, Ռուսաստանից ժամանած մարզիկները և այլն<sup>2</sup>: Իզուր չէ որ Մատենադարանի մի ձեռագրում այն անվանվում է «աշխարհահռչակ ձիարշավի» վայր<sup>3</sup>:

Նշված վկայություններից դժվար չէ եզրակացնել, որ Վանի շրջակայքի Չայկավանք վայրում գոյություն է ունեցել մշտական մարզակառույց, որ իր գոյությունը պահպանել է երկար դարերի ընթացքում: Մեր ասածը ամրապնդվում է նաև՝ Թովմա Արծրունու կողմից մեջբերված «երիվարների արկման դաշտ» մտքով, որ է ձիարշավարան:

Վասպուրականի մարզաշինությունները լայն թափ են առնում Արծրունիների թագավորության ժամանակաշրջանում: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Արծրունիների տոհմի պատմությունը ներկայացնող Թովմա Արծրունին, որ ապրել է 9-րդ դարի երկրորդ հիսնամյակում և 10-րդ դ. առաջին քառորդում, պետք է նշել, որ Արծրունիների թագավորության օրոք մշակույթի մի շարք բնագավառների հետ զուգահեռ մեծ վերելք ապրեց նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառը: Այս նկատառումով եթե մի կողմ թողնենք պատմագրական սկզբնաղբյուրների հարուստ փաստերը և օրինակ բերենք միայն Աղթամարի նշանավոր վանքի /10-րդ դ./ սպորտային թեմային վերաբերող աշխարհիկ արվեստի բնույթի պատկերաքանդակները /ըմբշամարտի, բռնցքամարտի, պանկրատի, նավարկության ցայտուն պատկերներ/. դա միայն բավական կլինի հաստատելու մեր

միտքը: Նշենք, որ Վասպուրականում Արծրունիների իշխանության օրոք, /որոնք արդեն 908թ. հիմնել էին իրենց թագավորությունը, և ավելի հզոր ուժ է դառնում 10-րդ և 11-րդ սարի սկզբներին /լայն թափ են առնում նաև շինարարական աշխատանքները, որոնց թվում և մարզակառույցները: Այս գործում խոշոր դեր է խաղացել Գագիկ Արծրունին /908-943թթ./: Գարտարապետ Մանվելի, օտարազգի և հայ վարպետների մասնակցությամբ նա մարզակառույցների շարքում հատուկ տեղ էր հատկացվում զվարճալիքների, ուրաղ ժամանցի և ակտիվ հանգստի բնույթի շինություններին: Թովմա Արծրունու «Պատմության» շարունակողը՝ Անանուն Արծրունին այդ մասին հայտնում է «... Ծովից հինգ կանգուն բարձրությամբ... կառուցեց պարիսպը մոտ հինգ ասպարեզ: Եվ պարիսպն էր հրաշակերտ, ահեղակերպ, զարդարված էր բարձրաբերձ լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով..., որտեղ միշտ զվարճանում էր արքան իր որդիների և ազատակույտ զորքերի հետ»<sup>1</sup> նշված վկայության մեկնաբանումը շատ հետաքրքիր գաղտնիքներ են բացում մեր առջև: Այստեղ հետաքրքիր են այդ կառույցի «հինգ ասպարեզ» պարսպապատված երկարությունն ու շինությունը, ինչպես նաև, «ազատակույտ զորքերի» հետ զվարճությունները իր որդիների մասնակցությամբ մտքերը: Այստեղից դժվար չէ կռահել, որ դա եղած պետք է լիներ մի մարզակառույց, որտեղ անցկացվեր ռազմա-մարզական խաղեր ու ֆիզիկական վարժություններ Արքայի ներկայությամբ, մի բան, որ յուրահատուկ երևույթ էր հին և միջին դարերում, որպես թագավորների ու իշխանների հաճույքների ու խրախճանքների ասպարեզի: Նման երևույթների մասին հարուստ տեղեկություններ կան օտար և հայ պատմագրական, բանահյուսական, արվեստի /պատկերաքանդակներ, մանրանկարներ/ և ազգագրական աղբյուրներում: Մյուս վկայությունը ունի հետևյալ բովանդակությունը «բազմաթիվ ճարտարապետների հետ, վարպետի լարը ձեռքին, լեռան ստորոտում...միանգամից տեղը նշանակեց և գծագրեց վայելուչ զբոսատեղեր, զցեց հանգստավայրին արժանի պարիսպ... պարտեզներ... տնկվեցին նաև բազմաթիվ ծառեր»<sup>2</sup>:

Չետաքրքիր է նաև հատուկ որսատեղերի կառուցումները, որտեղ ինչպես նշել ենք իրենց մարզումներն էին անցկացնում նաև արքայական և համընդհանուր զորքերը և ծառայում էին որպես մարզավայրեր: Գվաշուի գետն ավանում գրում է պատմիչն «շինեց վայելուչ խրախճատեղի: Այն մի բլուր էր, որը շրջապատեց բազում տներ ունեցող շինություններով, որտեղ երևում էին ստորին կողմի դաշտավայրերը, Երասխ գետի պտույտները, ուր թափառում էին երեւների, վայրի խոզերի հոտեր, ցիռերի երամներ, այստեղ կային և առյուծի բույներ: Դրանք միշտ պատրաստ էին և ձեռքի տակ՝ որսի հաճույքների համար»<sup>3</sup>:

Ինչպես ընդունված է ասել մեկնաբանումներն ավելորդ են. միտքը պարզ է: Ավելի մեծ հետաքրքրություններ են ներկայացնում Արծրունյաց թագավորների մայրաքաղաք Աղթամարում նավահանգստի և ձիարշավարանի կառուցումները: Պատմիչի վկայությամբ Գագիկ Արծրունին «հրաշալիք գործեց և ստեղծեց խաղաղ ու անբույր նավահանգիստ՝ նավերի խմբի համար»<sup>4</sup>: Պարզ է, որ Վանա լիճը պետք է, որ ունենար իր նավակայանը իր փոքր ու մեծ չափսի նավերով ու նավակներով: Չետևապես լճափնյա քաղաքը պետք է ունենար իր ջրանավարկային բազան: Այդտեղ նավարկության զարգացման մասին բացի գրավոր աղբյուրներից վառ վկայություն է Աղթամարի վանքի վրա քանդակված նավարկության կոմպոզիցիան: Վերջապես եթե եղել են «նավերի խմբեր» պետք է լինեին նաև մարզումների համար հարմարանքներ: Վասպուրականի մարզակառույցների մասին վառ վկայություններ են նաև Թ.Արծրունու, «մարզահանդեսներ» և «մարտահանդեսներ» բառերի գործածությունը զուտ մարզական նպատակով: Նա նկարագրելով Գուրգեն Արծրունու մարզվածությանը և ճարպկությանը ռազմաֆիզիկական վարժություններում ու խաղերում նշում է որ նա «մարտահանդեսների մեջ ցուցաբերում էր հաղթական քաջություններ» «սլանում էր խիզախաբար» «հաղթանակ էր տանում սրով, նիզակով և նետածգությամբ», «Եվ ոչ թե տեղ-տեղ էր մարզահանդեսների մեջ ցուցաբերում հաղթական քաջություններ, այլ բոլոր տեղերում սլա նում էր խիզախաբար»<sup>1</sup>:

Քննարկվող թեմայի համար արժեքավոր է նաև պատմիչի այն հաղորդումը, որ Գագիկ արքան ձիարշավի էր դուրս գալիս «ձիրնթացիկ ասպարեզում»<sup>2</sup>, իսկ սա նշակում է, որ Աղթամարի շրջակայքում կար նաև ձիարշավարան, այն էլ հատուկ կառուցված, քանի որ Գագիկ Արծրունին ինչպես նկատեցինք մարզական շինություններին հատուկ ուշադրություն էր նվիրում:

Վերը նշված փորձերից պետք է եզրակացնել, որ Վասպուրականի մարզակառույցները 3 բնույթի են եղել՝ զվարճալիքների և ակտիվ հանգիստ անցկացման համար, ցուցադրական ելույթների և ուսումնամարզական նպատակների համար:

## Արտաշատի մարզակառույցները

Արտաշատը հին Հայաստանի մայրաքաղաքներից մեկն էր, որ աչքի էր ընկնում նաև շինարարական-ճարտարապետական արվեստով ու ոճով: Իզուր չէ, որ Պշուտարքոսը Արտաշատին անվանել է «Հայաստանի կարթագեն», իսկ Ստրաբոնը լինելով Արտաշատի հիացած լինելով Արտաշատի շինություններով նշել է «Գեղեցկապես շինված-բնակեցված է և երկրի թագավորանիստ քաղաքն է»:

Արտաշատը որպես մայրաքաղաք հիմնադրվել է Արտաշատ Ա /189-160թթ./ օրոք, պատմաբանների կարծիքով ընդունելի է 185 թվականը<sup>1</sup>: Իսկ անկումը ընդհուպ մինչև 5-րդ դարը: Գ.Խ. Սարգսյանը ենթադրում է, որ քաղաքը պետք է որ կառուցված լիներ ժամանակի հելենիստական ոճով և քաղաքաշինության բոլոր կանոններով<sup>2</sup>:

Արտաշատը հանդիսացել է սկզբում Արտաշեսյանների, իսկ հետագայում հայ արշավանքների մայրաքաղաքը: Ս.Մ. Կրկյաշարյանը նշում է, որ «քաղաքն իրոք լավ էր կառուցված ու բնակեցված ..., հավանական է, որ քաղաքում կառուցված էին քարավան-սարայներ և առևտրական հրապարակներ<sup>3</sup>», իսկ ինչպես մենք գիտենք, քարավան-սարայներում և առևտրական և առևտրական հրապարակներում հաճախ էին կազմակերպվում և անցկացվում մարզամրցումներ, որոնք որոշ դեպքերում միջազգային բնույթ էին կրում: Կարծիքներ կան, որ Արտաշատի կառուցման գործում որոշակի դեր է խաղացել կարթագենի նշանավոր գորավար Հաննիբալը: Ըստ պլուտարքոսի Հաննիբալը Հռոմից պարտություն կրելուց հետո անցել էր Արևելք և ապաստանել Հայաստանում և որպես Արտաշեսի խորհրդատու մասնակցել էր Արտաշատի տեղի ընտրությանը, հատակագծմանն ու կառուցմանը<sup>4</sup>:

Հաննիբալյան մասնացությունը Արտաշատի կառուցմանը ներկա թեմայի հետ առնչվում է նաև ռազմա-մարզական բազաների կառուցման հարցի հետ: Սա իհարկե ենթադրություն է: Արտաշատի հիմնադրման մասին Մ.Խորենացին հետևյալն է հաղորդում. «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտախի փայտով»<sup>1</sup>:

Հ. Մանանդյանի կարծիքով հին Արտաշատը գտնվել է Խոր-Վիրապի վանքի շրջակայքում<sup>2</sup>, իսկ ավելի կոնկրետ տեղեկությունը տալիս է Բ. Առաքելյանը, այսինքն այն գտնվել է նույն Խոր-Վիրապի շրջակայքում, Արաքսի ափին, և ձգվել է մինչև Փոքր Վեդի<sup>3</sup>:

Ինչ վկայություններ կան Արտաշատի մարզակառույցներին նախ նշենք թատրոն-շինությունների վերաբերյալ: Հայտնի է, որ Արտաշատում գոյություն է ունեցել թատրոն-կառույց, որտեղ ցուցադրվել են թատերական տարբեր ժանրերի ներկայացումներ<sup>4</sup>: Այս հարցի վրա մենք չենք կանգ առնի, քանի որ այն համառոտ կերպով ուսումնասիրվել է Գ. Լևոնյանի և հանգամանալից կերպով Գ. Գոյանի<sup>5</sup> կողմից: Միայն պետք է ավելացնել, որ ինչպես Արտաշատ քաղաքն էր կառուցված հելլենիստական ոճով ու շինություններով, նույն ոճը իր վրա պետք է կրեր և թատրոնը իր կառուցվածքային տեսակետից: Եթե հաշվի առնենք, որ հելլենիստական շրջան /և հետագայի/ հունական կամ միջին ասիական քաղաքներում կառուցված թատրոնները ծառայել են ոչ միայն զուտ թատերական ներկայացումների, այլ նաև ֆիզիկական վարժությունների ու խաղերի ցուցադրման կամ մրցակցությունների համար/, ապա եթե այդ ընդունենք որպես վավերական փաստեր, ինքստինքյան հասկանալի կդառնա, որ Արտաշատի թատրոնը նույնպես պետք է որ հանդիսանար որպես թատրոն-մրցարան և այդտեղ նույնպես պետք է ցուցադրվեին թատերա-կրկեսային, ռազմաֆիզիկական բնույթ կրող վարժություններ ու խաղեր: Նշված եզրակացությունը պետք է ընդունելի համարել՝ հաշվի առնելով հարևան երկրների նման փորձը:

Միանգամայն տեղին է նկատել Ս.Մ. Կրկյաշարյանը, որ գրում է. «Ինչքանով որ այդ ժամանակի հելլենիստական քաղաքը չէր կարող առանց թատրոնի մնալ, բացառված չէ, որ Արտաշատը ևս ուներ իր թատրոնը, որի մասին անուղղակի ցուցմունք կա Պլուտարքոսի մոտ»<sup>1</sup>:

Բացառված չպետք է համարել նաև այն, որ Արտաշատում կամ նրա շրջակայքում պետք է, որ գոյություն ունենային նաև ռազմամարզական շինություններ /Ռազմադաշտեր, հայկական հեծելազորի համար վարժարաններ, ծիարչավարաններ և այլն/, որոնք անհրաժեշտ էին Արտաշատի գոյատևման ժամանակաշրջանի համար: Նշված ենթադրությանը կարելի է հիմնավորել հետևյալ կերպ: Նախ պետք է հաշվի առնել, ար Արարատյան դաշտը, որտեղ և գտնվում էր Արտաշատը ռազմա-ստրատեգիական տեսակետից կարևոր նշանակություն ուներ և օտարազգի զորաբանակների կարևոր նշանակություն ուներ և օտարազգի զորաբանակների հարձակումներից պաշտպանվելու մի թատերաբեմ էր հանդիսանում: Այս պարագայում ժողովրդի և հայկական զորքերի մարզումների համար ռազմա-մարզական բազաների կառուցումը և օգտագործումը անհրաժեշտ էր:

Երկրորդ. Արտաշատի գոյատևման շրջանը ինչպես Արտաշեսյանների այնպես էլ հայ Արշակունիների ժամանակաշրջանում ռազմական գործողությունների ու բախումների մի դժվարին ժամանակաշրջան էր, որը լի էր հայ ժողովրդի համար

հակահարձակողական ու հարձակողական գործողություններով: Այս պարագայում անհրաժեշտություն էր առաջացել ռազմաֆիզիկական դաստիարակության օջախների շինությունների կառուցումը, որպես ժողովրդի մարտական ու ֆիզիկական պատրաստության զարգացման վայրեր:

Երրորդ. Արտաշատը հանդիսանալով Հայաստանի մայրաքաղաք պետք է, որ առաջին հերթին օտար բռնակալների ուշադրության կենտրոնում գտնվեր, և առաջին հարվածը ուղղվեր նրա վրա: Ուստի քաղաքի պաշտպանության համար և գործին նախապատրաստվելու համար ռազմաֆիզիկական պատրաստության նկատառումով զգացվում էր բազաների շինության կարիքը Արտաշատում կամ նրա մոտակա արվարձաններում:

Այլ կերպ չէր կարող լինել քանի, որ թշնամաց պաշտպանվելու և հակահարված տալու նպատակով անպայման անհրաժեշտ էր զարգացնել ժողովրդի և զորքի մարտական ու ֆիզիկական պատրաստության մակարդակը, ուսուցանել ռազմաֆիզիկական վարժություններ, մարզել, իսկ առանց ռազմա-մարզական բազաների այն կազմակերպելը անհիմաստ էր: Այս նկատառումով, խոսելով Արտաշատի շինությունների ու բարենորոգումների մասին պատմաբան Գ.Խ. Սարգսյանը ճիշտ է նկատել, որ Արտաշատում «Բարենորոգման պետք է ենթարկված լիներ նաև ռազմական բնագավառը՝ զորքերի հավաքագրման, կազմավորման ու ղեկավարման գործը»<sup>1</sup>: Վերը նշված միտքը լավ է ընկալել նաև Վ.Հացունին. «Եթե մեր մեջ սովորական էր մարմնոք կրթությունը, ապա պարագան կպահանջե՝ որ լինեին և հատուկ մարզարանք», «պատրաստված վայրեր»<sup>2</sup>:

Արտաշատի և Արտաշես Ա-ի ժամանակաշրջանի քաղաքաշինության, գիտության, արվեստի, ռազմական արվեստի և այլ բնագավառների զարգացման ընդհանուր բնութագիրը տալու հետ միասին Մ. Խորենացին կոնկրետ տեղեկություններ է հաղորդում նաև մարզաշինությունների մասին:

Նա հայտնում է, որ «Արտաշեսի ժամանակ շատ գործեր կատարվեցին», որ չէր կատարվել նաև նախորդ թագավորների ժամանակ, «Նրանք այդպիսի բաներ չգիտեն» շեշտում է պատմիչը, նրանց ժամանակ «նույնպես և չկա նավագնացություն մեր աշխարհի ծովակների վրա, ոչ էլ ճանապարհորդություն գետերով, ոչ ձկնորսության գործիքներ.....»<sup>1</sup>:

Այս հաղորդումից դժվար չէ կռահել, որ Արտաշատում՝ գետերի և լճերի շրջակայքում կառուցվել են նավահանգիստներ, ձկնորսարաններ: Եթե հաշվի առնենք նաև Մ. Խորենացու այն հաղորդումը, որ Արտաշեսը «ի որդի Տիգրանին<sup>2</sup> հանձնում է վարազ անունով» մի մարզչի, որ Տիգրանին պետք է մարզեր<sup>3</sup>, ինչպես Մ. Չամչյանն է հուշում «ի գործս առաքինուե և պատերազմաց և մեծամեծաց

քաջությամբ»<sup>4</sup>, ապա պետք է կարծել որ Արտաշատում այդ նպատակով մարզումների համար կային նաև համապատասխան մարզարաններ: Այլ կերպ որտեղ պետք է մարզվեր Տիգրանը: Ավելացնենք նաև, որ վերնախավի ներկայացուցիչները իրենց մարզումների ու հաճույքների համար կառուցել են նմանատիպ շինություններ: Այս մասին մենք ունենք բազմաթիվ վկայություններ:

Արտաշես Ա-ի մարզաշինությունների և Արտաշատի մարզակառույցների մասին, լրացուցիչ վկայություններ են հանդիսանում հայագիտական մի շարք ուսումնասիրություններում տեղ գտած հաղորդումները: Այդ առիթով Մ. Բժշկյանը գրում է «Իսկ Արտաշես թագավորը դպրոցներ և վարժատներ շինեց, որ զանազան արհեստներ ու ուսմունք սորվին»<sup>5</sup>:

Այստեղ նա ի նկատի ունի նաև պատանիների ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպումը: Իսկ «վարժատներ» անվան տակ պետք է հասկանալ նաև մարզարանների իմաստը:

Ս. Տեր-Մովսեսյանը հաստատում է, որ «Արտաշատի օրոք շինուեցան մեհեաններ, հաստատուեցան մարզարաններ»<sup>1</sup>:

Ահա այս բոլոր գրավոր վկայությունները, որոնց ընդհանուր վերլուծությունը համոզեցուցիչ խթան է հանդիսանում Արտաշատում կամ նրա շրջակայքում մարզական շինությունների գոյության մասին:

## Տիգրանակերտի մարզակառուցներո

Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի քաղաքների մեջ հայ ժողովրդի մշակութային կյանքի և ընդհանրապես սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման գործում կարևոր ասպարեզ է հանդիսացել Հայաստանի հին մայրաքաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը<sup>2</sup>:

Տիգրանակերտը, որպես հելլենիստական ոճով կառուցված և ժամանակաշրջանի զարգացման քաղաքներից մեկը, հիմնադրվեց Ք.ա. 80թ. և իր գոյությունը պահպանեց շուրջ 5 դար: Պատմաբանները՝Գ.Խ. Սարգսյանը /տես նրա «Տիգրանակերտ» աշխատությունը, էջ 102,135/ , Ս.Ս. Կրկյաչարյանը /տես հին Հայաստանի և փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 119/ գտնում են, որ այդ քաղաքը գոյություն է ունեցել ընդհուպ մինչև 3-4 դարերը/:

Հունա-հռոմեական վկայությամբ՝ պատմիչները Տիգրան Բ-ի /95-55/ թ. Ք.ա. թագավորության շրջանում Տիգրանակերտում մեծ զարգացում է ապրում քաղաքաշինությունը, մշակույթի օջախները, վերափոխություններ է տեղի ունենում հասարակական կյանքում /հիմնականում հայերի հետ օտար ազգությունների ու ժողովուրդների մերձեցում, որից և մշակույթի փոխառություններ, փոխազդեցություններ/ Դրա հետ միասին զարգացման նոր ուղու վրա է կանգնում նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ռազմական արվեստի և ընդհանրապես հայ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության գործը: Այս ուղղությամբ խոշոր դեր են խաղացել նաև մարզաշինությունները, որոնք մեր համոզմամբ պետք է, որ կառուցված լինեին հելլենիստական ոճով:

Տիգրան Մեծը լինելով ժամանակաշրջանի քաղաքական և ռազմական խոշոր դեմք, բացառիկ ուշադրություն էր նվիրում երկրի հզորացման քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման ուղղությամբ:

Քննարկվող թեմայի նկատառումով խոշոր են նաև նրա ծառայությունները ժողովրդի մարտական պատրաստության և ֆիզիկական զարգացման հարցերում: Այդ են վկայում նրա կողմից հայկական զորաբանակում ռազմական արվեստի տեսակետից մտցրած նորամուծությունները<sup>1</sup>, մարզական շինությունների կառուցումները, ռազմա-ֆիզիկական վարժությունների տեխնիկայի և տակտիկայի կատարելագործումը և այլն:

Այժմ անդրադառնանք Տիգրանակերտի մարզաշինություններին: Պլուտարքոսի վկայությամբ Տիգրանակերտը խոշոր քաղաք էր, որ աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ «քաղաքը հարուստ էր և շրջապատված գեղեցիկ շինություններով»



գրում էր նա: Նույն պատմիչի վկայությամբ ի հարգանք Տիգրան Մեծի, քաղաքաշինության գործերին մասնակից են եղել ինչպես հասարակ մարդիկ այնպես էլ ազնվականությունը<sup>1</sup>:

Պլուտարքոսը պատմում է, որ Տիգրանակերտում Տիգրան Մեծի նախաձեռնությամբ կառուցվել է թատրոն: Նա նշում է, որ Տիգրանի դեմ հաղթանակ տանելուց հետո և Տիգրանակերտը գրավելիս /69 թ./ Ք.ա. Լուկուլոսը Տիգրանակերտում կառուցված թատրոնում ի պատիվ հաղթանակի կազմակերպել է խաղեր և թատերա-կրկեսային խաղեր և թատերական ներկայացումներ: Գրում է պատմիչը, որ Լուկուլոսը ևս այդ ամենը արեց , իմանալով, որ քաղաքում կա թատրոն: Այստեղ, ինչպես մենք արդեն նշել ենք, թատրոն հասկացողությունը թատերա-կրկեսային ներկայացումների արեճա հանդես գալով բացի, միաժամանակ մարզակառույց է եղել տարբեր խաղերի ու ֆիզիկական վարժությունների ցուցադրման, հետևապես և մարզական ելույթների համար: Մեր ասածը ամրապնդվում է Պլուտարքոսի մեկ այլ հաղորդումից: Նա պատմում է, որ Լուկուլոսը Միհրդատ Պոնտացու դեմ տարած հաղթանակից հետո, նույնպես կազմակերպում է թատրոնում խաղեր, մենամարտեր ու գլադիատորական կռիվներ:

Այդ առիթով պատմիչը գրում է. «նա իր հաղթանակը ձգտում էր ցուցադրել ատլետների մրցություններով, գլադիատորների խաղերով և հաղթանակ տոնախմբություններով»<sup>3</sup>:

Այսպիսով Պլուտարքոսի հաղորդումից դժվար չէ եզրակացնել, որ Տիգրանակերտում գոյություն է ունեցել թատրոն-մարզակառույց, որ ծառայել է նաև մարզահանդեսներ կազմակերպելու և անցկացնելու համար: Տիգրանակերտում գոյություն ունեցած թատրոնի վերաբերյալ խոսել են Գ. Լևոնյանը<sup>1</sup>, Գ. Գոյանը<sup>2</sup> և ուրիշներ, ավելացնենք, որ Տիգրանակերտի թատրոն-մարզակառույցը, որի կառուցվածքային տեսքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, պետք է, որ ձևավորված լիներ միայն հունական թատրոն-մարզակառույցների ոճով, որը մուտք էր գործել Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանում /4-րդ դա. / Ք.ա. և տարածվել նաև Արևելքի մյուս քաղաքներում: Գ. Գոյանը հայտնում է /սակայն չի հիմնավորում իր ասածը/, որ Տիգրանակերտի թատրոնը նախատեսված է եղել 3000 հոգու համար<sup>3</sup>:

Տիգրանակերտի ընդհանուր նկարագրությունը, որի թվում և մարզակառույցների ու ֆիզիկական դաստիարակության այլ վայրերի մասին հաղորդում է տվել Ապպիանոսը /2-րդ դա./ Ք.ա. նա իր հռոմեական պատմության ծավալուն աշխատության 12-րդ գիրքը, որ «Միհրական» է անվանել հիմնականում նվիրված է Միհրդատ Պոնտացու դեմ հռոմեացիների մղած պատերազմներին: Այս

աշխատության որոշ գլուխներ նվիրել է հին Հայաստանի պատմությանը և հատկապես Տիգրան Մեծի ռազմական գործունեությանը, Տիգրանակերտի կառուցմանը և այլն: Մեզ համար հետաքրքիր է Ապպիան Ալեքսանդրիացու «միհրդատական» գրքի 84-րդ գլխում շարադրված հետևյալ տողերը, որ նվիրված են Տիգրան Մեծի մարզաշինություններին: Նա գրում է, որ Տիգրանակերտի կառուցման ժամանակ 50մ կանգուն բարձրություն ունեցող հաստ պարիսպների և այլ շինությունների հետ միասին Տիգրանը կառուցել է նաև «ձիերի ավտոռներ ու մանեժներ, որսարաններ, զրոսարաններ, ձկնավազաններ, լճեր»:

Յ. Մանանդյանի կարծիքով նշված մարզակառույցները կառուցվել են ոչ թե քաղաքի մեջ, այլ քաղաքի մերձակայքում<sup>2</sup>: Որտեղ էլ, որ կառուցված լինեին դա կարևոր չէ, կարևորն այն է, որ Տիգրանակերտը իր շրջակայքով հարուստ է եղել մարզակառույցներով: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Տիգրանակերտի շրջակայքում գործերի մարզման համար նախատեսված հատուկ ռազմամարզադաշտը, որտեղ բնակել կամ մարզվել են Տիգրան Մեծի զորքերը<sup>3</sup>:

Յ. Մանանդյանը ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ ռազմադաշտի մասին: Պարզվում է, որ այդ ռազմադաշտը, որ Ձորադաշտ անվանում է կրել, ծառայել է Լուկուլլոսի զորքերի դեմ նախապատրաստվելու հայկական զորաբանակի ռազմական գործողությունների և ռազմաֆիզիկական վարժությունների ուսուցման և մարզման մի վայր: Պաշարված տիգրանակերտցիները ցույց են տվել իրենց արիության ու ճարպկության մակարդակը հռոմեացիներին: Գերմանացի գիտնական Բելքի կարծիքով այդ ռազմամարզական դաշտը «տարբեր տեղերում մեկից մինչև երեք կիլոմետր» երկարություն է ունեցել<sup>6</sup> և հետագայում հռոմեացիները անվանել են «Նիկեփորիոն» այսինքն «հաղթաբար»: Այդ անվանումը ըստ գերմանացի նշանավոր հայագետ Մարկվարտի՝ վերանվանվել է ի շնորհիվ Տիգրանի դեմ Լուկուլլոսի տարած հաղթանակի:

Ավելորդ չէ նշել, որ ռազմամարզական դաշտերի կառուցումները հելլենիզմի դարաշրջանում գուցե և հետո ընդունված էր եղել: Այդ առիթով Մ. Խորենացին Ալեքսանդր Մակեդոնացու կառույցների մասին ասում է, որ Ջարեհի դեմ պատերազմի պատրաստվելիս նա Կոնստանդինոպոլսի շրջակայքում կառուցում է «ստրատեգիոն կոչվածը, որովհետև այստեղ նա կազմակերպեց իր պատերազմական սարքերը»<sup>1</sup>:

Գ. Լևոնյանի կարծիքով Տիգրանակերտում գոյություն է ունեցել նաև արքունական մարզարան, որտեղ Տիգրան Մեծի /95-55թ./ Ք.ա. որդի Արտավազդ II /55-34թ. Ք.ա./ թագավորը հաճախ էր կազմակերպում զանազան հանդեսներ ու

մարզական ելույթներ: Այդ առթիվ նա նշում է «իր հոր պալատու... կազմակերպում է զանազան հանդեսներ ու սպորտներ»:

Վերը նշված վկայություններից պարզվեց, որ դեռևս Ք.ա. I-ին դարում Տիգրանակերտում գոյություն են ունեցել մարզակառույցներ, որոնք կարևոր դեր պետք է խաղացած լինեին հայկական զորաբանակի և ժողովրդի ռազմա-ֆիզիկական պատրաստության զարգացման գործում: Դա պատահական երևույթ չպետք է համարել: Մարզակառույցների երևան գալը առընչվել է ժամանակաշրջանի քաղաքական և ռազմական իրադարձությունների հետ, որում Տիգրան Մեծի ժամանակաշրջանում ավելի մեծ նշանակություն ունեին: Հետևապես անհրաժեշտություն էր դրանց շինությունները՝ ժողովրդական մարտական ու ֆիզիկակն պատրաստականության զարգացման և հայրենիքի պաշտպանության համար:

## Գառնիի մարզասպարեզը

Գառնին հին Հայաստանի մշակութային կենտրոններից մեկն էր, միաժամանակ համարվում էր թագավորանիստ բնակավայրը և հայկական զորքերի հավաքատեղի: Պեղումների արդյունքները ցույց են տվել, որ Գառնին բնակատեղի է եղել սկսած մթա 3-հազարամյակից մինչև ուշ միջնադարը ներառյալ: 16-րդ դարի բնաստեղծ Սիմկոն Ապարենցու «Ողբանք ի վերայ թաղտին Տրդատայ թագավորին» պոեմի էջերում ակնարկված է, որ ժամանակին Գառնիում եղել է արքունական մարզասպարեզ:

Հավանաբար զուրկ չէ ենթադրել, որ այն պետք է, կառուցված լիներ Տրդատ Ա. թագավորի /63-88թթ./ ժամանակ, քանի որ ինչպես հայտնի է թագավորը ռազմաֆիզիկական հիանալի պատրաստականությամբ և Հռոմում ու Նեապոլում Ներոն տիրակալի կողմից կազմակերպված հասարակական խաղերում հաղթող ճանաչվեց բացի դրանից եթե Գառնին զորքերի հավաքատեղի էր պետք է որ իր շրջակայքում ունենար նաև ռազմաֆիզիկական վարժությունների համար մարզասպարեզներ: Պեղումներից հայտնաբերված զենքերի հարուստ քանակը նույնպես խոսում է դրա օգտին. Գառնիի հեթանոսական տաճարին կից եղել է նաև փակ լողարան, որի հետքերը պահպանվել են մինչև մեր օրերը:

## Վաղարշապատի մարզարանը

Վաղարշապատը հին Հայաստանի մայրաքաղաքներից մեկն էր, որ աչքի էր ընկել իր ճարտարապետական կառույցներով: Հելլենիստական մշակույթի ազդեցությունը կրող քաղաքը պետք է, որ ունենար նաև մարզակառույցներ: Ահա այդ մասին, որ մեզ տեղեկություն է հաղորդում 7-րդ դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին:

Նկարագրելով Կոնստանտինոս կայսեր /668-685թթ./ այցը Վաղարշապատ և նրա հանդիպումը Աղվանքի մեծարգո իշխան, հետագայում արքա Ջվանշիրի /651-683/ հետ պատմիչը նշում է, որ նրանց երկրորդ հանդիպումը տեղի է ունեցել կայսերական մարզարանում: «Եվ երբ գարունը բացվեց, Աղվանքի մեծարգո իշխանը կազմ պատրաստ գտնվեց երկրորդ անգամ տեսնելու կայսրին և հանդիպեց Վաղարշապատ քաղաքում»<sup>1</sup>:

Ամենայն հավանականությամբ Վաղարշապատի մարզարանը արքունական կամ վերնախավին պատկանող մի մարզակառույց էր, որտեղ մարզվում էին թագավորները: Նշենք, որ նման մարզասրահում էր մարզվում նաև Վարազդատը՝ օլիմպիական խաղերի չեմպիոնը / 370-374թթ./:

## ԴՎԻՆԻ մարզաշինությունները

ԴՎԻՆը հին Հայաստանի մայրաքաղաքներից մեկն էր, որ հիմնվել է Խոսրով Կոտակի /330-338թթ./ օրոք: Հենց նա էլ ԴՎԻՆը դարձրեց մայրաքաղաք: Հնագիտական ու պատմագրական նյութերից տեղեկանում ենք, որ ԴՎԻՆը հայտնի է եղել իրեն նյութական ու հոգևոր մշակույթով<sup>1</sup>: ԴՎԻՆը հայտնի է եղել նաև իր մարզաշինություններով: ԴՎԻՆի ձիարշավարանում էր, որ հեծյալ մականախաղ տեղի է ունեցավ Շապուհի և Շավասյ Արշրունու միջև:

Մ. Խորենացին այդ մասին հաղորդում է. «Մի անգամ մականով խաղալիս Շավասյ Արժրունուն հաջողվեց գնդակը երկու անգամ խլել Շապուհից»: Այնուհետև վիճաբանությունից հետո Շավասյը «...Քամիրանքով ձիարշավի ասպարեզից դուրս է սլանում»<sup>2</sup>:

Նույն ձիարշավարանի մասին վկայում է նաև Թովմա Արժրունին: Պատմիչը այն անվանում է «ասպատակության ասպարեզ»: «...Եվ քաջ Շավասյ Արժրունին ձիարշավի գնդակախաղի ժամանակ ձին մտրակելով նրա ետևից՝ խլում է նրանից գնդակը և ասում. հեռացիր ասպատակությանս ասպարեզից», -գրում է նա: ԴՎԻՆի թատրոն-ձիարշավարանի մասին վկայում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին: Նա նշում է , որ Դավիթ և Գուրգեն Գնունի եղբայրները թատրոնի ասպարեզում են նահատակվում Յուսուֆի կողմից:

ԴՎԻՆ թատրոն-մրցարանների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Յով. Մայրազունեցին /մայրավանեցի-Մանդակունի/, որ ԴՎԻՆի եկեղեցական նշանավոր գործիչներից էր, իսկ հետագայում հայոց կաթողիկոս /478-490 թվականներին/: Լինելով հելլենիստական մշակույթի, որի թվում և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի թշնամի, նա կատաղի պայքար էր մղում նման մշակույթի դեմ և իր ճառերում քարոզում դրանց շուտափույթ վերացումը: Մարզաշինությունները պատմիչի մոտ ներկայացվում են «թատրոն-խաղաց» և «սատանայական հրապարակներ» հասկացությունների տակ: Մայրազունեցին նախ մոլորություն է համարում, որ ժողովուրդը «երթալ մտանել ժապականիչ թատեր խաղուց», որտեղ և գուսաններ էին ցուցադրումներ կատարում, և հետո թեթևամիտ է անվանում նրանց ովքեր «ի թատեր փութան աներկիվ ի տեսիլ անորեն խաղուցն և սատանայական հրապարակի, ելեալ ի վեր ի դիտակ տեղիս նստին, խորհին և դիտեն զնմանիսն իվրանց ի չարիս»: Այս տողերում բացի խաղ հրապարակներն ու թատրոն-շինությունները ներկայացնելով, որտեղ բազմամբոխ ժողովուրդ էր հավաքվում և դիտում թատերա-կրկեսային ներկայացումներն ու խաղերը, պատմիչը շեշտում է նաև «ելեալ ի վեր ի դիտակ տեղիս նստին» միտքը, որ հասկացվում է այդ շինություններում նաև կառուցված նստարանատեղերի մասին, այն էլ բարձր դիրքից: Բյուզանդացի պատմիչ Պրոսկոպիա

Կեսարացին նշում է, որ Դվինը եղել է նաև միջազգային առևտրի կենտրոն «Հնդկաստանից, հարևան Իբերիայից և այլն բոլոր երկրներից, որոնք գտնվում էին պարսիկների իշխանության ներքո հռոմեացիները բերում էին ապրանքներ և առևտուր անում»:

Նշանակում է, որ տնտեսական կյանքի զարգացման հետ զուգահեռ զարգանում էր նաև մշակույթի բնագավառը, հասարակական սոցիալական կյանքում պետք է, որ փոփոխություններ մտցվեր: Առևտրի հրապարակներում հայտնի էր, որ Արևելքի ժողովուրդների մոտ հաճախ էին անցկացվում ցուցադրական մարզահանդեսներ: Այստեղ չի բացառվում, որ Դվինի առևտրական հրապարակներն էլ հանդես գային որպես մրցելույթների ասպարեզ:

Դվինի շրջակայքում էր գտնվում նաև արքունական որսատեղին, որն յուրօրինակ մի մարզարան էր: Հայտնի է, որ Խոսրով թագավորի օրոք Դվինից մինչև Գառնի ընկած տարածքում տնկվեց ընդարձակ մի անտառ, որը մինչև օրս պահպանվել և կոչվում է Խոսրովի անտառ:

Փավստոս Բուզանդի վկայությամբ Խոսրով թագավորը /330-338թթ./ այդ անտառը զցել էր հատուկ որսորդությամբ զբաղվելու, զվարճանալու և ուրախանալու նպատակով, նշենք, որ որսորդությունը նույնպես կարևոր մարզած էր հատկապես վերնախավի համար:

Ահա թե ինչ է գրում պատմիչը «Անտառն աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ որսի կենդանիներ ու գազաններ հավաքել ու լցնել պարսպատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի և ուրախության տեղեր դառնան»<sup>1</sup>:

13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին նույնպես նշում է, որ Խոսրով թագավորը «Արտաշատ մայրաքաղաքը փոխում է Դվին ու տնկում է կաղնու անտառներ իբրև զվարճանքի տեղ»:

Խոսելով Դվինի մարզակառույցների ու խաղիրապարակների մասին ուշադրության է արժանանում ակադ. Կ. Ղաֆադարյանի մի հաղորդումը այն մասին, որ Դվինում գոյություն է ունեցել Արշակունյաց թագավորների գահանիստ մի դահլիճ, որի երկարությունը կազմել է 29մ, լայնությունը՝ 12.5մ, իսկ ընդհանուր մակերեսը 362մ: Հավանականությունից զուրկ չէ դատել, որ դա նույնպես արքունական մի սրահ էր, որտեղ պետք է, որ անցկացվեին նաև ներկայացումներ ու մարզական ելույթներ, մրցումներ, ինչպիսին մենք նկատում ենք մյուս քաղաքում: Այս փաստի օգտին է խոսում նաև միջնադարյան ձեռագրերի մանրանկարները՝ թագավորի ներկայությամբ մարզամրցումները:

## Տարոնի ձիարշավարան

Պատմիչ Յով. Մամիկոնյանը Տարոնի գավառում երկու մեծ վայր է նշում՝ Բուստր քաղաք և Մատրավան, որտեղ մականախաղի դեպքեր է նկարագրում: Հայ-պարսկական ընդհարումներից մեկի ժամանակ հայ զորավար Վահան Մամիկոնյանը կտրելով պարսիկ զորավար Միրհանի գլուխը և դիմելով գերևարված զինվորներին ասում է. «Այս մարգպանը երբ եկավ մեր երկիրը, զորքերը իրար դեմ դուրս եկան և խաղալու գնդակ ուզեցին..., բայց ձեր զորամասում էլ գնդակ չգտանք, ուստի կտրեցինք այս գլուխը և խաղացինք: Այժմ լսեցինք, թե Շահաստանից եկել ենք Բուստր քաղաքը՝ մի տաշտածն և տափարակ երկիր, գիտենք որ գնդակ կխաղանք»<sup>2</sup>, ապա գլուխը տալով ծառաներից մեկին ասում է «պահիր այդ, իջնենք մահրավանում՝ գնդակ խաղանք սուրբ կարապետի առջև»:

«Տարոնի հայության մեջ զարգացած էր ձիարշավներ կազմակերպելու սովորությունը ...Ձիարշավներն ավելի մասսայական բնույթ էին ստանում ս. Կարապետի վանքի մոտ: Տոն օրերին այստեղ հավաքվում էին բացի տեղացիներից նաև Կարնո, Վասպուրականի, Բաղեղի, Խնուսի և այլ հեռավոր շրջանների հեծյալ կտրիչները:

Ս. Կարապետում նշանավոր ձիարշավները կազմակերպվում էին հատկապես վարդավառին, որը հաճախ տեղի էր ունենում արգելքների հաղթահարումով, նիզակախաղով և այլն»:

Նման փաստերը խոսում են Տարոնի ձիարշավարանների օգտին:

## Զարեհավանի ձիարշավարանը

Փավստոս Բուզանդը նկարագրելով պարսկական Շապուհ արքայի կողմից Բագրևանդ գավառի Զարեհավան քաղաքի շրջանում հայ ժողովրդի կոտորածներն ու անկարգությունները, այսպիսի մի դեպք է ներկայացնում. «Այստեղ զորքն հավաքեցին պարսից թագավորի առաջ, հայոց աշխարհի մնացորդների ամբողջ գերությունը... հազարներով ու բյուրերով սպանեցին... իսկ փախած նախարարների և ազատների կանանց հրամայեց բերել

Շապուհը արշավելով Զարեհավան քաղաքի ձիարշավի հրապարակը, անցնում էր կանանց միջով»<sup>1</sup>:

## Մարզակառույցների Աղվանքում

Աղվանքը Հայաստանի արևելյան կողմում էր գտնվում, որ սահմանակից էր հայկական Ուտիք նահանգին՝ Կուր գետի ընթացքով<sup>4</sup>:

Աղվանքի ժողովրդի կենցաղային սովորությունները նկարագրելիս Մովսես Կաղանկատվացին միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում մարզական շինությունների մասին: Դրանք պատմիչի մոտ հանդես են գալիս «մարզահրապարակ» /բնագրում՝ հոլարան/, ձիարշավ, արշավ, անվան տակ:

Ինչպես երևում է նրա կողմից ներկայացված տողերից, պատմիչին դուր չեն եկել հեթանոսական շրջանից դեպի միջնադար հասած խաղերն ու ֆիզիկական վարժությունները, պարերը, որոնց նա «հեթանոսական պղտոր պաշտամունք» է անվանում: Նա կոնկրետ նշում է, որ մարտահրապարակներում «Ձուռնա էին փչում ու թմբուկ էին զարկում» «դաշույնահարություններ ու դանակի ցցումներ» ու «մերկանդամ սրահարություններ» էին կատարում: «Եվ խուռն բազմությունը ըմբշամարտերով միմյանց հետ անառակություն է անում ու ձիարձակ արշավով այս ու այն կողմ ճախրում...», ոմանք ըստ իրենց սատանայական սովորության զվարճանում էին»<sup>1</sup> նաև «խաղեր էին խաղում ու պարեր բորբոքում»<sup>2</sup>:

Վերը նշվածից դժվար չէ եզրակացնել, որ նշված խաղերն ու մենամարտերը անցկացվել են մարզահրապարակներում, իսկ ձիարշավները՝ Իպպոդրոմներում:

## Գանձակի ձիարշավարանը

Անվանի ազգագրագետ Եր. Լալայանը ականատես է եղել Գանձակի երիտասարդների ձիարշավների: «...Գանձակի երիտասարդությունը դուրս էր գալիս մի հրապարակ, քաղաքում՝ «Ջամբուր» կոչված դաշտը, և արշավում: Ահագին բազմությունը գալիս էր դիտելու իրենց ճարպկությունը ցույց տվող երիտասարդներին»<sup>2</sup>:

Կարելի է ենթադրել, որ Գանձակի ձիարշավարանը ավելի հին մարզակառույց պետք է լիներ:

Եղեսիայի / Ուռհա / ձիարշավարանը



Եղեսիա, Միջագետքի մշակույթային խոշոր կենտրոններից էր: Կարծիքներ կան, որ քաղաքը հայոց արքա Տիգրանն է հիմնադրել: Սկզբից ի վեր քաղքի ազգաբնակչության մեծ մասը հայերեն են եղել, իսկ Մաթևոս Ուռհայեցու օրոք այն լրիվ հայաբնակ քաղաք էր, որի մասին բացի հայկական աղբյուրներից վկայում են արաբական սկզբնաղբյուրները<sup>1</sup>: Եղեսիայի մարզակառույց, ձիարշավարանի գոյության մասին ունենք հետևյալ վկայությունները.

Մ. Չամչյանը հիմնվելով օտար աղբյուրների վրա, հաղորդում է , որ Եղեսիայի Հայոց Աբգար թագավորը գնում է Հռոմ Օգոստոս կայսրին տեսակցելու: Կայսրի այն հարցին, թե ինչով կարող են ձեզ օգտակար լինել կամ ի՞նչ խնդրանք ունեք ինձանից, Աբգարը խնդրում է Եղեսիայում կառուցել հռոմեական ոճով մի մարզակառույց-թատրոն <sup>2</sup>: Օգոստոս կայսրը Աբգարի խնդրանքը չի մերժում. այն կառուցվում է:

Այս մարզակառույցի մասին ավելի հավաստի աղբյուրը մեզ հաղորդում է Պրոկոպիոս Կեսարացին / VI դ./ պատմագրի վկայությամբ Եղեսիայի Աբգարը, որը մաժամանակ հայտնի որսորդ էր, խնդրել է Օգոստոսից «Եղեսիա քաղաքում իր համար ձիարշավարան կառուցել<sup>3</sup>», որ չի մերժվում կայսեր կողմից: Թե ինչ չափսերի, ոճով ու տեսքով է կառուցվել այդ ձիարշավարանը, մեզ հայտնի չէ, սակայն գլխավոր փաստն այն է, որ մեր թվականության առաջին դարում /Օգոստոս կայսրի ապրած և իշխած ժամանակաշրջաններում/ հայկական Եղեսիա քաղաքում կառուցվել ու գործել է ձիարշավարան–ստադիոն:

Այսպիսով, վերը նշված հարցերի քննությունից պարզվեց, որ Հայաստանի մի շարք քաղաքներում ու քաղաքամերձ վայրերում գոյություն են ունեցել և գործել են բազմաթիվ ձիարշավարաններ ու ստադիոններ, ինչպես նաև առանձին մարզակառույցներ, որոնք նշանակալի դեր են խաղացել ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության գործում:

Անշուշտ, առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե դրանք ինչպիսի կառուցվածքային տեսք են ունեցել:

### **Դիարբեքիրի-Ամիդի ստադիոնը**

Մեծ Հայքի Աղձնիք նահանգի հարավ-արևմտյան սահմանի վրա էր գտնվում Ամիդը և Արևմտյան Տիգրիսի վրա միջնադարյան առևտրական խոշոր քաղաք էր իրենից ներկայացնում /այժմ Դիարբեքիր/:

Ասորի պատմիչ Ջաքարիա Հռետորի /6-րդ դ./ վկայությամբ այդ քաղաքը որ հայաբնակ վայր էր, ունեցել է իր մարզադաշտ-ստադիոնը: Պատմիչի վկայությունից

երևում է, որ պարսկական զորքերի հարձակման ժամանակ ձերբակալվում են Ամիդ քաղաքի մեծ թվով բնակիչներ. «աքղաքի մնացած մեծամեծներն ու մոտ տաս հազար մարդ ձերբակալվեցին ու փակվեցին ստադիոնում, նրանք այնտեղ պահվում էին առանց ուտելիքի»<sup>3</sup>: Այստեղ մեծ արժեք ներկայացնող «Ստադիոն» բառից բացի կարևոր է նաև «տաս հազար մարդ» հասկացողությունը: Դա թույլ է տալիս եզրակացնելու որ այդ մարզակառույցը մի ընդարձակ շինություն է եղել, որը կարելի է համարել ժամանակակից փոքր մասշտաբի ստադիոնների հետ, իսկ հին շրջանի ստադիոնների հետ համեմատած այն նշանավոր մի մարզակառույց էր:

### **Մելիտենի մարզակառույցները**

Մելիտենն երկրորդ Հայքի մարաքաղաքն էր, որ հետագայում կոչվում էր Մալաթիա: Այժմ թուրքերը անվանում են էսբի-մալաթիա: Պրոկոպիոս Կեսարացու վկայությունից տեղեկանում ենք, որ Հայաստանի Մելիտենն քաղաքում Հուստինիանոս կայսեր /527-565/ օրոք քաղաքաշինության բնագավառում հելլենիսական ոճով մի շարք կառույցներ են կատարվել, որոնց թվում և մարզակառույցներ: Այդ մասին պատմիչը հաղորդում է . «Հուստինիանոս կայսր ամեն կողմից պարիսպներով շրջապատելով այն, Մելիտենն դարձրեց հայոց հզոր ամրության և զարդ»<sup>2</sup>: Քննարկվող թեմայի նկատառումով ավելի արժեքավոր է պատմիչի մյուս հաղորդումը, որտեղ ավելի կոնկրետ է խոսում նշված քաղաքում կառուցված մարզակառույցների մասին: « Հնում , -գրում է նա ,-փոքր Հայք կոչված երկրում, Եփրատ գետից ոչ շատ հեռու , Մելիտենն քաղաքում հաստատվեցին...վարչական շենքեր, հրապարակ...բաղնիքներ, թատրոններ»<sup>3</sup>:

### **Բյուրականի թատրոն- մարզաշինությունը**

Հովհաննես Դրասիանակերտցու մի վկայությունից երևում է, որ թատրոն մրցասպարեզ գոյություն է ունեցել նաև Բյուրականում: Նկարագրելով Բյուրական ամրոցի վրա Նըսր Ոստիկանի զորախմբերի հարձակումը և ժողովրդի անխնա կոտորածը պատմիչը նշում է. «Հանեալ զիվրաքնչիվր գնոսա ի թեատրոն անդր. ճարակ անողորմ հրոյ տային»<sup>1</sup>:

Նշված տողերից երևում է, որ թատրոնի տերիտորիան որոշակի տարածություն պետք է գրավեր, որտեղ հավաքել են ժողովրդին: Հավանաբար իր կառուցվածքային տեսակետով այն բաց շինություն պետք է լիներ: Այլ խոսքով մեծ հրապարակ կամ փոքր ստադիոնատիպի վայր, որտեղ պատմությանը հայտնի վկայություններում հավաքագրում էին գերված ժողովրդին: Հիշենք այս ուղղությամբ Ասորի պատմիչ

Չաքարիա հռետորի «...մոտ տաս հազար մարդ գերեվարեցին ու փակեցին ստադիոնում» վկայությունը Դիարբերքի քաղաքի մասին: Նշենք, որ նման դեպքերը պահպանվել և հասել են մինչև մեր օրերը: Դրա վկայությունն է Չիլիի մայրաքաղաքի ստադիոնում Պիոլետի ոստիկանների կողմից ազատասեր չիլիցիների բանտարկման և հալածման փաստը:

### Անիի մարգաշինությունները

Թ-րդ դարի երկրորդ կեսին, երբ Հայաստանը նորից ձեռք բերեց անկախություն և վերականգնեց իր պետականությունը հայ ժողովրդի առջև բացվեց երկարատև խաղաղ շինարարական մի շրջան, որ հայտնի էր սոցիալ-տնտեսական, քաղաքական և հատկապես մշակույթի զարգացման վերելքով: Բագրատունիների թագավորության օրոք քաղաքշինության, արտաքին ու ներքին առևտրի, արդյունագործության ու արհեստագործության զարգացմանը զուգահեռ բուռն վերելք ապրեց նաև ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառը: Պատմագրական աղբյուրներում այս մասին հարուստ վկայություններ են պահպանված: Հետաքրքիր տեղեկություններ կան նաև ինչպես ընդհանուր, այնպես էլ մարգաշինությունների վերաբերյալ:

Սմբատի /977-990/ և իր հոր Աշոտ Ա-ի /925-977/ շինությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ստեփան Ասողիկը<sup>4</sup>:

Դեպքերին ականատես պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին նշում է , որ Աշոտ Ա-ի օրոք կառուցվեցին «մրցարանաց շինություններ» և «խաղաղության հանդեսներ»<sup>1</sup>: Աբրահամ Կրետացին ավելի վառ ձևով բնութագրելով Անիի բնակիչների բարքերն ու սովորությունները, գրում է. «քանզի երկիրն առատաբեր էր և պարարտ, վանային ի կեր և խում...,ի առասցելս, և ի խաղս, ի պարս...»<sup>2</sup>:

Նշենք, որ Աբրահամ Կրետացու հաղորդած «ի խաղս, ի պարս» միտքն նույնպես խոսում են Անիում գոյություն ունեցած խաղ-հրապարակների մասին. նշված մտքի ապացույցն է նաև Անի քաղաք մրցասպարեզներում Աշոտ Բ-ի տարած հաղթանակների մասին Յով. Դրասխանակերտցու հաղորդումը<sup>3</sup>: Ուշագրավ է նաև նույն պատմիչի վկայությունը այն մասին, որ Անիում թատերակրկեսային ներկայացումները ցուցաբերվում էին թատրոն-մարգակառույցներում<sup>4</sup>: Նշենք նաև, որ Անին, որպես մայրաքաղաք պետք է ունենար նաև մի մեծ մարգակառույց, որ իր չափերով համապատասխան լիներ բազմահազար բնակիչ ունեցող քաղաքում ժողովրդական, մասսայական խաղերն ու մրցությունները անցկացնելու համար: Հենց այդ մասին է վկայում Աբրահամ Կրետացին: Նա խոսելով մարգահանդեսների դիտման նկատմամբ Անիի բնակչության սիրո և հետաքրքրության մասին նշում է, որ

ժողովուրդը գերադասել է ավելի շատ դիտելու մարզասպարեզները, քան մասնակցել եկեղեցական արարողություններին: Նա որպես եկեղեցական գործիչ ավստսանքով է հայտնում, որ մարդիկ անավարտ թողնելով եկեղեցական արարողությունները շտապելով «զնշխարս առեալ գնային ի թատերա, ի թատրոնս, ի ասպարեզս ձիարշավարանաց»<sup>5</sup>: Պատմիչի հաղորդումը վառ վկայություն է Անիում գոյություն ունեցած մարզակառույցների և հատկապես ձիարշավարանի մասին: Անիում կար նաև նետաձգության հրապարակ<sup>6</sup>:

### **Յեր քաղաքի մականահրապարակը**

Մաթևոս Ուռհայեցու /12-րդ դար մի վկայությունից իմանում ենք, որ հայկական Յեր քաղաքի շրջակայքում եղել է մի մականախաղի մի ընդարձակ հրապարակ, ուր Ամիրաներն ու իշխանները հաճախ զբաղվել են հեծյալ մականախաղով-«գունդ խաղով»: Նման մի հետաքրքիր խաղ տեղի է ունեցել Արաբական Ամիրա Ապլիաճի /10-րդ դ./ և հայոց իշխան Դերենիկ Արծրունու միջև / Ուռհայեցին Դերենիկին համարում է Անձավացյաց թագավոր-Կ.Ա./, «Հայաստանի ճուաշ գավառում»<sup>3</sup>: ճուաշը Վասպուրականի 20-րդ գավառն էր, որ ընդգրկում է այժմվա Աղչայ գետի ընդարձակ հովիտը<sup>4</sup>:

Սի կողմ թողնելով Դերենիկ և Ապլիաճի միջև տեղի ունեցած իրադեպքերը, անցնենք այդ խաղ\*հրապարակի հարցին:

Պատմիչը հաղորդում է. «Ապլիաճ Ամիրան Դերենիկին կալանքից ազատել է և շարունակ նրան տարել Յեր քաղաքի դուրս գտնվող Դաշտը՝ գունդ խաղալու»<sup>1</sup>, հետաքրքիր է նաև մյուս հաղորդումը, որ հազարավոր մարդիկ են հավաքվել այդ վայրում: «Սի օր Ապլիաճը գնացել էր իր բազմաթիվ ազատներով գունդ էր խաղում: Նրանց շուրջն էին գտնվում հազար զինված մարդ... Դերենիկը իշխանավորների ավագից արագավազ ձի խնդրեց... գունդը հրեց դեպի այն կողմը, որտեղ Յերի անտառախիտ թավուտներում թաքնված էր Ապլիարիպը»<sup>2</sup>:

Նշված հաստատող փաստեր են Յեր քաղաքի շրջակայքում անտառախիտ ստորոտում մականախաղի հրապարակի գոյության մասին: Դրան հաստատող վկայություն է նաև Ստ. Ասողիկի հաղորդածը այն մասին, որ Արաբական արշավանքների ժամանակ, նրանց զորավար Աբլիաճը նկատում է Յեր քաղաքի շրջակայքում հայ երեխաների խաղերը «...-սահմանն հերոք անանցանեին...տեսանեին զմանկանս քրիստոնեայս գեղեցիկս ի խաղու»<sup>3</sup>:

## Մարզակառույց Սուրմալուի գավառում

1893-1894թթ. պրոֆ. Ա. Իվանովսկու կողմից Արևմտյան Հայաստանի Սուրմալուի գավառում կատարած հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է աշխարհիկ բնույթի մի շինություն, որ հեթանոսության ժամանակաշրջանին է վերագրվում: Պրոֆ. Խ. Սամուելյանը անդրադառնալով այդ շինության վերլուծությանը կարծիք է հայտնել, որ շենքը ունեցել է 15 սաժեն<sup>1</sup> երկարություն և ուղղանկյուն-երկարավուն տեսք: Խ.Սամուելյանը այդ շինությունը անվանում է «հասարակակն մի շենք»<sup>2</sup>: Միթե դա մարզակառույց չի եղել, մանավանդ, որ իր տեսքով ու չափերով համապատասխանում է մարզադահլիճին: Թեպետ նման ենթադրությունը բավական չէ հիմնավոր եզրակացության հանգելու համար, սակայն հարկ է նշել, որ Յով. Ոսկեբերանի, Եզնիկ Կողբացու հաղորդած «կռվանոցներ» հասկացողությունը որոշ չափով աղերսվում է նշված հարցի օգտին խոսելու հանգամանքների հետ:

## Մարզակառույցների Կիլիկիո- Հայաստանում

Կիլիկիայի հայկական պետությունը, որ գոյություն ունեցած մոտ 300 տարի /1080-1375թթ./, և իր կապերը չխզեց մայր Հայաստանի հետ, մշակույթի բնագավառում, որի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում խոշոր դեր խաղաց, ինչպես Հայաստանի, այնպես էլ մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքում<sup>2</sup>: Պատմագրական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Կիլիկիո Հայաստանում մեծ վերելք է ապրել ֆիզիկական կուլտուրան և սպորտը հատկապես ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակությունը: Նշենք, որ ժողովրդի ռազմա-ֆիզիկական դաստիարակության կազմակերպումը իր բոլոր կողմերով պետք է առնչվեր նաև մարզական շինությունների հետ: Ի՞նչ ապացույցներ կան այդ մասին:

Ղ. Ալիշանը հիմնվելով Վիլլեն Բրանտի հուշերի վրա, որը ականատես է եղել 1212թ. Սիս քաղաքի շրջակայքում կատարված հայկական մի տոնախմբության արարողությանը, նրա նոթերից մի քանի մեջբերումներ է անում: Ըստ որի ձիարշավարանում «զգեստացած ձիերով արշավներ են կազմակերպվել: Այս մարզական մի դաշտում հայ երիտասարդները «ձիերով արշավելով ու նիզակներ խորտակելով զինվորական խաղեր են կատարել»<sup>1</sup>:

Ինչպես երևում է ռազմական խաղերն ու ֆիզիկական վարժությունները անցկացվել են ձիարշավարանում և ռազմական դաշտում, որ նույնպես մարզաշինությունների շարքին պետք է դասել:

Նման մի մարզադաշտ գտնվել է նաև Գարամանի շրջակայքում. Ղ. Ալիշանը նկարագրելով հայկական զորքերի մարզումները նշում է. որ Յեթում Ա-ի / / ղեկավարությամբ, ... տասն Բիւրուք արշաւանս արեալ ի կողմն Գարամանի<sup>2</sup>: Կիլիկիայում ձիարշավարանների գոյության մասին է վկայում նաև Ներսես Շնորհալիւն: Նա գրում է , որ քահանաները անտարբեր չեն մնացել «ի խրախճանութիւնս խաղաց ձիընթացից»<sup>3</sup>, որ նրանք էլ երիտասարդների նման ձիավարությամբ են զբաղվել:

Յետաքրքիր է նշել, որ Կիլիկիայում զարգացած էր դաստիարակությունը, նրանց ձեռնադրումը կամ թագադրումը: Դա կապված էր նաև զանազան ռազմաֆիզիկական վարժությունների /հատկապես ձիավարությունների/ նորմատիվների կատարման հանձնման արարողությունների հետ: Պարզ է, որ նման պայմաններում պետք է, որ գոյություն ունենային նաև մարզակառույց–շինություններ: Նման բնույթի կողմնակի հիշատակություններ կան Սմբատի Դատաստանագրքում, Յով Դարդելու մոտ և այլ աղբյուրներում, որոնց մենք դեռևս կանդրադառնանք:

Կիլիկիայի Սարոս գետի ափին գտնվող Ադանա քաղաքի ձարշավարանի գոյության մասին տեղեկություն է պահպանվել ազգագրական նյութերում: Կիլիկիացի ազգագրագետ Ֆր. Յ. Գալուստյանը, /որի աշխատությունը հրապարակվել է 1934թ. Նյու-Յորքում/ հաղորդում է մականախաղի մի հետաքրքիր մրցության մասին, որ տեղի է ունեցել հայ անվանի ձիավարորդ , քիրիդի հմուտ մասնագետ Տեր Օհանի և Ասլան Ալիի միջև: Ձիավարժին հատուկ որոշ նախավարժանք կատարելուց հետո Տեր Օհանը Պեյի հետ «...ձիարշավի հրապարակը կերթան, որ Ատանայի կամուրջ են քիչ մը հեռու տափարակ վայր մըն էր»<sup>1</sup>: Խաղը դիտելու համար «մեծ բազմութիւն հավաքված էր»,-նշում է հեղինակը:

Կիլիկիայի հայոց կաթողիկոս Գրիգոր տղայի «Երուսաղեմի նշանավոր ողբ-պոեմում /1187թ./ արտացոլված «ու՞ր ձիավարժն իթատերին» միտքը անշուշտ Կիլիկիայի ձիընթացներում ցուցադրվող ձիավարժների ելույթները նկարագրող մի վառ օրինակ է: Սամվել Անեցու /XI/ հաղորդումն էլ Յեթում Ա-ի որդի Լևոնի մասին հետաքրքիր վկայություն է Կիլիկիայի ձիարշավարանների գոյության մասին: «...դուրս գալով ձիարշավի ասպարեզ»<sup>2</sup>:

Ձիավարժությունների մեջ նա հաղթում է բոլոր զինվորներին նշում է պատմիչը:

Չնագույն Կիլիկիայի Պերգե քաղաքի թատրոն-ստադիոն մարզակառույցի վերաբերյալ Ղ. Ալիշանը հետևյալն է հաղորդում «Թեատրոն մեծաշեն, ասպարեզն 17 կարգ աստիճանոք կան նստարանոք»<sup>3</sup>:

Չետաքրքիր է նշել, որ այդ շինությունից վերև գտնվում է հայկական Անահիտ դիցուհու տաճարը, որ հանուն նրա հիշատակի զոհաբերություններ ու մրցումներ էին անցկացնում հայերը: Ուշագրավ է նաև 12-րդ դ. վերագրվող և ազգագրության մեջ պահպանված հետևյալ միտքը, որ գիր է առել կիլիկիացի Գր. Գալուստյանը:

Նա այսպիսի տողեր է թողել «,...քեզ էր վայել թագավոր լինել... այսպիսի կառքով կառամարտել, այսպիսի ձիարշավարանում արշավել, այսպիսի ստադիոնում բազմել, այսպիսի մրցում տեսնել...»<sup>1</sup>: Սրանք նույնպես մեծարժեք հաստատող փաստեր են Կիլիկիայի մարզակառույցների մասին:

### Երևանի մարզահրապարակները

Ազգագրական նյութերից, օտարազգի ճանապարհորդների նոթերում և պարբերական մամուլի էջերում պահպանված տեղեկություններից իմանում ենք, որ հին Երևանում նույնպես գոյություն են ունեցել մարզադահլիճներ ու խաղահրապարակներ, որտեղ նաև միջազգային մրցումներ են անցկացվել: Այդ տեսակետից ուշագրավ մի վկայություն է թողել 17-րդ դարի ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Շարդենը: Երևանի բերդի մարզասրահներից մեկում դիտելով ըմբշամարտի մրցումները /հատուկ պատրաստված գորգի վրա/, նա նշում է որ գոտեմարտերը «տևեց մեկ ժամ և վերջացավ»: Չետաքրքիր է, որ այդտեղ բացի մրումներից տեղի են ունեցել նաև ցուցադրական ելույթներ: Նա հայտնում է, որ Երևանի մարզիկներից մեկը «ցուցադրեց ըմբշամարտի 365 հնարք»<sup>2</sup>: Իհարկե, դա չափազանցություն է, սակայն փաստը մնում է փաստ:

Չին Երևանի ամեն մի թաղ ունեցել է իրեն հիմնական խաղահրապարակը, սակայն ամենահիմնական խաղահրապարակը գտնվում է բերդի շրջակայքում /հավանական է Ղանթարի շրջակայքում/, որ կոչվում էր մեծ կամ շուկայական հրապարակ: Այստեղ հաճախ են կազմակերպվել և անցկացվել ֆիզիկական տարբեր վարժությունների և հատկապես ըմբշամարտի մրցումներ: Որոշ դեպքերում նման մրցումները միջազգային բնույթ են ստացել, միմյանց հետ մրցել են հայերը, պարսիկները, թուրքերը և այլն<sup>1</sup>: Այստեղ էր, որ Վան քաղաքից ժամանած ըմբիշ Չայկոն փառավոր հաղթանակ տարավ պարսիկ անվանի ըմբիշի դեմ<sup>2</sup>:

## ՄԱՐԶԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՅՐԱՊԱՐԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանում գոյություն ունեցող մարզակառույցներն ըստ իրենց բնույթի բաժանվում են երեք խմբի. փակ շինություններ, բացօդյա խաղ հրապարակներ, խրաղճատեղեր /զբոսավայրեր, որսատեղեր, լողավազաններ և այլն/:

**ՓԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Դրանք հանդես են գալիս մարզարան, կռվանոց, երիտասարդանոց, մարզատուն, օդա և այլ անվանումներով: Փակ շինությունները տարածված են եղել հին և միջնադարյան Հայաստանում, բայց ինչ կառուցվածքային ոճ և ինչ չափեր են ունեցել հնագիտական և պատմագիտական աղբյուրներում պահպանված տեղեկությունները սուղ են: Այնուամենայնիվ այդ տեղեկությունները թույլ են տալիս կատարել որոշ եզրահանգումներ: Այսպես. հեթանոսական շրջանին վերաբերվող «հասարակական շենքը» որ հայտանբերվել է Սուրմալուի գավառում մարզարանի տեսք ունի՝ մեկ հարկանի, ուղղանկյուն, երկարավուն /15 սաժեն/ շինություն է: Շենքի կառուցվածքային ոճն ու չափսերն թույլ են տալիս ենթադրելու, որ այն համապատասխանում է մենամարտերի և այլ մարզանքների դահլիճներին:

Եզնիկ Կողբացին /5-րդ դար/ նման կռվանոց-մարզարաններին «մեծ տուն» է անվանում, իսկ ակադեմիկոս Ստ.Մալխասյանը դրանց անվանում է «շենք կամ հիմնարկ»: Եզնիկ Կողբացին վկայում է նաև, որ կռվանոցի պատերից կախված էր լինում մտրակը /պատժելու համար /1//: Այս փաստը նույնպես վկայում է, որ դրանք փակ շինություններ են եղել: Թեպետ մարզակառույցի չափսերի ու կառուցվածքի մասին Կողբացին ոչինչ չի հաղորդում, այնուամենայնիվ «մեծ տուն» և «շենք-հիմնարկ» հասկացողությունները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք եղել են մարզաշինություններ համապատասխան տարածության հրապարակով /ենթադրվում է, որ այն կազմել է 10x6 մ/:

«Երիտասարդանոցներ»-ն էլ որպես փակ շինություններ ունեցել են իրենց հարմարությունները, ինչպես մենք նկարագրեցինք ազգագրական տվյալներից, դրանք ընդգրկել են իրենց մեջ բավականին թվով բազմություն /գյուղի կամ համայանքի պատանիներն ու երիտասարդները, ծերերը/, ուստի իր չափսերով որոշակի տարածություն է ընդգրկել, եղել են շրջանաձև դասավորված նստատեղեր /խսիրներով ու թաղիքներով ծածկված թունբեր/, իսկ մեջտեղում խաղերի ու ֆիզիկական այլ վարժությունների համար հատուկ հրապարակ:

Ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդանոցները կամ օդաները եղել են տարբեր չափերի, մասնավորապես երկարությամբ՝ 15-30 մ, լայնությամբ՝ 6-10մ:



Խաղային հրապարակները /խաղահրապարակներ/ տարածված են եղել Հայաստանի գյուղերում, քաղաքներում, սրբավայրերում, ուխտավայրերում: Ըստ չափերի եղել են փոքր, միջին, մեծ:

Հրապարակների չափերը կամ տարածքը կախված է եղել մասնակիցների քանակից, խաղի բնույթից և այլն:

Չափերի նկատառումով մատենագրական աղբյուրներում հանդիպում ենք «մեծ հրապարակ», որտեղ

Խաղացողների խումբը կազմել է 100-120 հոգի, «լայնատարած հրապարակ» և այլն: Ժողովուրդը խաղ-հրապարակների վայրը ընտրում էր հատկապես ավելի հարթ տեղերում որտեղ հաշվի էր առնվում նաև հանդիսատեսների հարմար նստատեղերը:

Առանձին խաղերի համար հրապարակների հատուկ սարքավորումներ չէր պահանջում, սակայն առանձին մարզածևեր ինչպիսիք էին ըմբշամարտը, պանկրատիոնը և այլն, պահանջում էին ավելի փափուկ տեղեր քանի որ հակառակ պարագայում կարող էր վնասվածքի պատճառ դառնալ: Օրինակ ըմբշամարտի մրցումներն ու մարզումները հիմնականում անցկացնում էին բասմայի, գորգերի, ավազների, մարզագետնի, հարդի վրա և այլն: Ընդհանրապես ընդունված էր կանաչապատ վայրերը, որոնք հայտնի են չիմանատեղ, չաիբներ, կանաչատեղ անվանումներով: Համապատասխան մարզածևի կամ խաղի բուն հրապարակի կոնկրետ չափերի մասին գրավոր աղբյուրների միակ տեղեկությունը մեզ հայտնում է «Մշակ» թերթի թղթակիցներից մեկը նշելով, որ ըմբշամարտի բուն հրապարակը եղել է 25-30 քմ տարածությամբ: Չպետք է անտեսել, որ առանձին խաղերի (լախտախաղեր, գնդակախաղեր, նշանառային խաղեր, սահմանագծային խաղեր) համար կազմակերպիչները առանձին սահմաններ էին նշանակում:

Բացօդյա մարզաշինությունների մեջ առանձնակի ուշադրության են արժանի ձիարշավ-կառարշավարանները, որոնց գոյությունը արձանագրված է ուրարտական սեպագիր արձանագրություններում: Հայաստանի ձիարշավարանների չափերի ու կառուցվածքային ձևի մասին միակ արժեքավոր և մեծ հետաքրքրություն պատճառող վկայությունը հաղորդում է անվանի բանասեր ազգագրագետ Գ. Սրվանձտյանցը: Նկարագրելով Վան քաղաքի շրջակայքում դեռևս հնագույն շրջանից հայտնի և մինչև 19-րդ դարը գործող ձիարշավարանը: Նա գրում է. «Ահա տափակ և ընդարձակ դաշտ մը զարդարված ծառաստաններով և բաժանված զատ-զատ պատերով»: Նրա վկայությամբ տեղաբնիկները այդ մարզակառույցին «ավազոտ ասպարեզ», «Ավազնոց», «Արարուց մեյդան» անվանումներն են տվել: Նկատելի է, որ ձիարշավարանը ավազեպատ մի ասպարեզ է եղել, մի բան, որ ընդունված էր նաև հին հույների մոտ: Ինչպես տեսնում ենք, ձիարշավարաններում որոշակի

կառուցապատման աշխատանքներ են տարել՝ ծառեր են տնկել, պատեր են կառուցել/ հավանականությունից զուրկ չէ ենթադրել, որ պատերը շարել են ժողովրդի համար վտանգազերծ գոտի ստեղծելու նպատակով/ ձիարշավների ու ձիախաղերի, կառարշավների ժամանակ ձիակոխ չպատահելու կամ էլ պատշարը պետք է հասկանալ արգելքներ հաղթահարելու իմաստով: Վերջապես պատերի բաժանված լինելը հնարավոր էր, որ ծառել են նաև առանձին խաղերի շիրիմք, ձիաքրշավի կամ կառարշավի առանձին ասպարեզներ: Ձիարշավարանների տարածական չափերը անորոշ են եղել:

Այդ մասին ազգագրական նյութերում պահպանվել են հետևյալ տեղեկությունները. օրինակ՝ ձիավորները բաժանվելով երկու խմբի, ասպարեզ են ընտրում մինչև 200 մ տարածություն կամ նախապես ընտրում են 1 կմ երկարությամբ և 300 մ լայնությամբ մի հրապարակ. նշվածը վերաբերվում է ձիարշավարաններում տեղի ունեցած ջիրինդախաղերին: Սակայն պետք է կարծել, որ ձիարշավարանները պետք է որ ունենային տարբեր երկարության և լայնության չափսեր, դա կախված էր նաև տարածության ընտրությունից, այսինքն նախքան ձիարշավը, ձիավարորդները կամ ձիարշավի կազմակերպիչները հատուկ նշանակետերով իրենք էին ընտրում իրենց ցանկացած տարածությունը:

Բացի այդ, ձիարշավների ընտրվում էր մեկ կամ մի քանի հայկական ասպարեզով /155-1690մ./, պարսկական ասպարեզով /230.4/ կամ հունա-հռոմեական ասպարեզով /185մ./ և այլն:

Ըստ չափսերի ձիարշավարանները եղել են մեծ և փոքր: Մեծ ձիարշավարանների մասին մի ակնարկ ունի Ստ.Ասողիկը, որին «Մեծ կրկեսիոս» է անվանում:

Դրանք հիմնականում օգտագործվում էին մեծ մասշտաբի մրցումների համար, որ հաճախ ժողովրդական տոնախմբություններ /նշանավոր/ էր լինում: Ինչ վերաբերվում է ձիարշավարանների տեղի ընտրության հարցին, ապա դրանք ընտրվում էին այնպիսի վայրերում, որ ժողովրդին հնարավորություն ընձեռնեին ավելի բարձր դիրքերից դիտելու ձիարշավարաններն ու ձիարշավարաններում անցկացվող զանազան խաղերը:

Դրա ապացույցն է էպոսում պահպանված հետևյալ էպիգրոդը.

Դավթին տանում են ձիարշավարան Մսրա Մելիքի հոլախաղերը դիտելու. նա ասում է, որ «Ես կերթամ զատ տեղ կը կայնեն», որպեսզի վտանգ չպատահի իրեն, իսկ մյուս դեպքում Դավիթը կանգնում է «Մեյդանի գլխին» տեսնում է ասպարեզում ընթացող խաղերը: Ձիարշավների ու ձիախաղերի վայրեր են հանդիսացել նաև լայնատարած ու հարթ դաշտերը: Օրինակ՝ Մուղանի դաշտի մասին Աբրահամ

Կրետացիին ասում էր « Մեծ և անհուն դաշտս», «Դաշտ մի հիանալի», «Գուռ ու տափարակ», ապա «Որ եթե խնձոր մի գիցե ոք ի գետնի, կարելի է ի հեռավոր տեղաց տեսանել...», Ռազմադաշտերը «Տարբեր տեղերում 1 մինչև 3 կմ» տարածություն ունեին:

Բաց մարզաշինությունների թվին են դասվում նաև ստադիոններն ու բացօդյա թատրոնները:

Ասորի պատմիչ Ջաքարեա Յռետորի (6-րդ դար) մի վկայությունից իմանում ենք, որ Դիարբերիքի ստադիոնը իր չափերով ու տարողությամբ մեծ է եղել, որտեղ 10000 ձեռքակալվածներ են տեղավորվել: Դրա օրինակը մենք նկատում ենք Պերգեյում, որ Ալիշանի նկարագրությամբ մի թատրոն էր «... Մեծաշեն, ասպարեզն 17 կարգ աստիճանոք կամ նստարանոք», իսկ Դելֆիում ստադիոնը 7000 մարդ տարողություն ուներ:

Նման ստադիոնները ունեցել են ուղղանկյուն, երկարավուն ասպարեզ:

Բացի այդ, հին շրջանների ստադիոնների ասպարեզը թեպետ մի ընդհանուր տարածություն էր, սակայն ուներ առանձին սեկտորներ, ինչպիսիք էին ձիարշավների վազքուղիները, մենամարտերի, այլ խաղերի ու մարզաձևերի հրապարակները: Մարզաշինությունների 3-րդ խումբը, որոնք են ` զբոսավայրերը, սեյրանատեղերը, որսատեղերը, ինչպես նաև լողավազաններն ու ձկնավազանները հանդես էին գալիս պատրաստ վիճակում, որը ժողովուրդն էր ընտրում, իսկ մյուս կողմից բնական պայմաններում ստեղծվածի հիման վրա ժողովուրդը որոշակի շինարարական փոփոխությունների մեջ էր մտցնում: Կառուցում էին տարբեր չափերի լողավազաններ, ձկնավազաններ, ցանցապատված որսապարաններ: Այս մասին պատմագրական և բանահյուսական աղբյուրներում կան բազում վկայություններ:

Հայաստանի պայմաններում մինչև 19-րդ դարը, ժողովրդի կողմից պահպանվել են նման վայրերը, որոնք որոշակի տեղեկություններ են տալիս այդ մասին գաղափար կազմելու համար:

Նշենք նաև, որ ամեն մի գյուղ, քաղաք, գավառ ուներ իր ավանդական լողալու և ձկնորսության տեղերը, զբոսանքների վայրերը, որսատեղերը և այլն:

Այդ նպատակների համար կային նաև համընդհանուր վայրեր:

**Ամփոփենք.** Վերը մեջբերված բազում վկայությունները համոզում են, որ հին և միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել ինչպես փակ, այնպես էլ բացօդյա բազմաթիվ մարզական շինություններ, որոնց հետքերը ժամանակագրական նկատառումով նկատվում են դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում և հարատևում մինչև 19-րդ դարի վերջերը: Դրանց կերտողներն ու ստեղծողները, կուտակված փորձի հիման վրա եկել են այն համոզման, որ մարզաշինությունները,

որտեղ կազմակերպվել են տարբեր բնույթի խաղեր, ֆիզիկական վարժություններ, թատերա-կրկեսային ներկայացումներ, մրցույթներ ու ցուցադրական ելույթներ, խոշոր դեր են խաղացել ժողովրդի ռազմա-ֆիզիկական դաստիարակության արդյունավետ և նպատակասլաց կազմակերպման, ինչպես նաև ժողովրդի ակտիվ հանգստի, նպատակային ժամանցի, զվարճությունների ու հաճույքների գործում:

Ազգագրական, լեզվական, բանահյուսության, պատմագրական և մասամբ էլ հնագիտական վկայություններից պարզվեց, որ Հայաստանում գոյություն ունեցած մարզաշինությունները ըստ տեղագրական վայրերի տարածված են եղել գյուղերում, քաղաքներում, քաղաքամերձ ավաններում, ինչպես նաև սրբավայրերում, տոնախմբությունների ու ուխտագնացությունների կենտրոններում:

Մեր ձեռքի տակ կուտակված բազմաթիվ վկայությունները հնարավորություն ստեղծեցին պարզ դասակարգում մտցնելու նաև մարզաշինությունների համակարգում: Պարզվում է, որ մարզաշինությունները ըստ իրենց բնույթի բաժանվել են 3 հիմնական խմբերի. դրանք են՝

ա/ **Ուսումնամարզական** – որտեղ կազմակերպվում և ուսուցմանվում էր զանազան խաղերի ու ֆիզիկական վարժությունների մարզական գործընթացը: Սրանց շարքերն են դասվել մարզարանները, կռվանոցները, վարժատները, երիտասարդանոցները և այլն, որոնք մտնում էին փակ շինությունների մեջ: Այս գործին են ծառայել նաև բացօդյա հրապարակները:

բ/ **Ցուցադրական** – սրանց մեջ մտնում էին զանազան խաղերից ու մարզաձևերից անցկացվող մրցումները, ցուցադրական ելույթները, թատերա-կրկեսային ներկայացումները և այլն: Այս նպատակին ծառայել էին ձիարշավարանները, թատրոնները, խոշոր չափսի հրապարակները, կրկեսները և այլն:

գ/ **Ակտիվ հանգստի կազմակերպման վայրերը** – ժողովրդի առողջության ամրապնդման, ֆիզիկական ծանրաբեռնվածության թոթափման, զվարճության, նպատակասլաց ժամանցի և ֆիզիկական կոփման համար վայրեր են ծառայել սեյրանատեղերը, զբոսավայրերը, որսատեղերը, լողավազանները, ձկնավազանները և այլն: Միաժամանակ պետք է նշել, որ խոշոր մարզակառույցի ոչ մի հետք չի պահպանվել նաև աշխարհիկ և հասարակական շինությունների հետքերը, դրանց մեծ մասը դարերի ընթացքում ավերվել և ոչնչացվել են օտարազգի հարձակումներից, երկրաշարժից, քրիստոնեության կողմից և այլևս չեն վերականգնվել, ինչպես վերականգնվում էին քրիստոնեական կառույցները: Համեմատական կարգով նկատվում է նաև, որ հին և միջնադարյան Հայաստանի մարզաշինությունների ձևն ու ոճը, չափսերն ու տարածությունները բնորոշ են ոչ միայն հայկական

ճարտարապետական և շինարարական արվեստին, այլ նաև մյուս ժողովուրդների (հույներ, իրանացիներ, կովկասյան ժողովուրդներ և այլն): Այս ընդհանրությունների հիմքում նկատվել են մշակութային շփումներն ու փոխազդեցությունները, ինչպես նաև ժողովուրդների համանման ռազմա-ֆիզիկական դաստիարակության խնդիրները, նպատակներն ու բովանդակությունը:

## Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ազաթանգեղոս - Պատմություն Հայոց.- Երեվան – 1977:
2. Աթոյան Կ. - Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում.- Երևան.-1985:
3. Աճառյան Հ. - Հայերեն արմատական բառարան. – հատ. 1, 2, 3, 4.- Երևան-1946:
4. Առաքելյան Առ. - Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն.- հատ. 1.- Երևան-1959:
5. Առաքելյան Բ. - Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության. - Երևան-1976:
6. Բղոյան Վ. - Հայ ազգագրություն.- Երևան-1974:
7. Բաբայան Լ. - Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության.- Երևան-1981:
8. Եզնիկ Կողբացի - Եղծ Աղանդոց.-Երևան – 1970:
9. Թովմա Արծրունի - Պատմութիւն տանն Արծրունեաց.- Կ.Պոլ- 1852:
10. Իսախրյան Մ. - Մարզական տերմինների բացատրական բառարան.- Երևան.-1984:
11. Կիրակոս Գանձակեցի - Պատմություն հայոց.- Երևան- 1982:
12. Կրկյաշարյան Մ. - Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ.- Երևան-1970:
13. Մանանդյան Հ. - Երատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը.- Երևան.- 1934:
14. Մանանդյան Հ. - Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում.- Երևան.- 1930:
15. Մանանդյան Հ. - Տիգրան Երկրորդը և Հռոմը.- Երևան.- 1940:
16. Մանուչարյան Ա .- Քննություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի.- Երևան.- 1977:
17. Նոր բառագիրք Հայկազեան լեզուի.- հատոր Ա,Բ.-Վենետիկ.-1834-1836:
18. Մամուլեյան Խ. – Հին Հայաստանի կուլտուրան. – հատոր 1,2.- Եր.- 1931, 1941:
19. Մատենադարանի Ձեռագրեր .- թիվ 623, 450, 4184, 7550:

20. Саркисян Г. – Тигранакерт.-М.-1960,1967.
21. Гоян Г. – Театр Древней Армении. М.-том 1-4.- 1955.
22. Гагина Ю. – Спортивные сооружения.- М.-1976:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ